

# Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutian» (education) weekly «Кртытиун» (образование) еженедельник 30.11.2022թ. չորեքշաբթի թիվ 50 (1075)

## Հետահայաց

## Աշխարհի հետ

### Անկախությունը եւ մենք

### Սթափության հրավեր

Ճիշտ 95 տարի առաջ՝ **1920թ. դեկտեմբերի 2-ին**, Հայաստանի կառավարությունը ստիպված էր իշխանությունը զիջել բուլշեիկներին, որից հետո սկսվեց մեր ժողովրդի պատմության խորհրդային 70 տարիներն ընդգրկող ժամանակաշրջանը, որի բնութագրական հատկանիշներին մեր ընթերցողը քաջածանոթ է պատմությամբ եւ, իհարկե, սեփական կյանքով ու փորձով:

**Հայաստանի** առաջին **Հանրապետությունը** գոյատևեց **1918թ. մայիսի 28-ից** մինչև **1920թ. դեկտեմբերի 2-ը**: Այսօր արդեն յուրաքանչյուր հայաստանցու, յուրաքանչյուր հայի համար անբեկանելի գիտակցություն է Հայաստանի Հանրապետության նշանակությունը. կրկնենք մեկ անգամ եւս – **600** տարիների երկարուձիգ դեպքերումներից հետո, զանազան տերությունների բարյացակամությանը վերապահելով **հայկական ինքնուրույն պետականության վերականգնման** եւ ապա **Հայկական հարցի** համապարփակ լուծման խնդիրը, վերջապես, 1918-ին, իրադարձությունների բերումով, **ստիպվեցինք ապավինել միայն մեր սեփական ուժերին** (1917-ին խորտակվեց ցարիզմը, իսկ 1918-20թթ. բուլշեիկյան Ռուսաստանը զբաղված էր քաղաքացիական կռիվներով) **եւ հաղթեցինք**: 1918-ին նորաստեղծ Հայաստանը, ճիշտ է, ուներ ընդամենը **10.000** քվե տարածք, բայց 1920-ին արդեն՝ **70.000**: Եվ խնդիրը միայն փաստացի տարածքը չէր. միայն երկու տարիների ընթացքում Հայաստանի անկախ պետությունը կարողացավ կարգավորել հանրապետության ներքին կյանքը: Իսկ կացությունը 1918-ին ծանրագույն էր. եղեռնազարկ ժողովուրդ, սով, համաճարակ, գաղթականների քարավաններ... Սակայն աստիճանաբար կայունացան **ունեությունները**, առևտրական հարաբերությունները, կարճ ժամանակամիջոցում ստեղծվեց **կանոնավոր զորքաբանակ**՝ ուժեղ *սպայական կազմով*, հոգեւոր մարզերում նշանակալի էր զարթոնքը, կար *ազատ մամուլ*, պետությունից *անկախ դատարան*, *ազատ քաղաքական կազմակերպություններ*, մի խոսքով՝ **ժողովրդավարական** մի հասարակարգ՝ *բազմակուսակցական պառլամենտով*, *ընտրովի կառավարությամբ*:

Հայաստանի Հանրապետության հաջողությունները նշանակալի էին նաեւ արտաքին-դիվանագիտական ոլորտներում: 1920թ. օգոստոսի 10-ին կնքվեց **Սեւրի դաշնագիրը**՝ մեր ժողովրդի համար ամենից կարելու եւ ընդունելի միջազգային փաստաթուղթն առ այսօր, ըստ որի՝ գրեթե ամբողջապես լուծվում էր Հայկական հարցը: Սակայն... կրկին ապավինեցինք օտարին, կորցրեցինք մեր անկախությունը... Թեեւ 1918-20 թվականների վերածննդի ոգեւորությունն այնքան զորեղ էր, որ պետականաշինության ոգին շարունակվեց ընդհուպ մինչև **1988 թ. փետրվարյան համաժողովրդական հուժկու շարժումը** **եւ հայոց պետականության վերականգնումը**... Այսօր, փառք Աստծո, **Հայոց եռագույնն** է փողփողում մեր հրապարակների ու շենքերի վրա, մեզ հետ են մեր հին ու նոր հերոսների, քաղաքական գործիչների ոգիները, սակայն հստակ գիտակցում ենք, որ դեռ դժվարին ճանապարհ ունենք անցնելու մինչև իրական **Անկախություն**: Իսկ դեպի ազատություն մեր ճանապարհին մեզ հարկ է ուսումնասիրել հենց **Հայաստանի առաջին Հանրապետության երկու տարիների պատմության յուրաքանչյուր օրը** եւ, հատկապես՝ **Հանրապետության կորստի բոլոր հանգամանքները**՝ ամենայն մանրամասնությամբ: **Ապագան նրանն է, ով չի կրկնում իր սխալները, եւ ում պարտությունները դասեր են դառնում հաղթանակների:**

**1991թ. սեպտեմբերի 21-ի Անկախության հանրաքվեի** օրվանից մեր երկիրն ունի **ազատ, անկախ, ինքնիշխան** կարգավիճակ... Այս ընթացքում մեզ հաջողվել է ստեղծել անկախ երկիրն բնորոշ քաղաքական հաստատությունները (**Նախագահ, Ազգային ժողով, Կառավարություն, Կենտրոնական բանկ, Սահմանադրական դատարան**), ընդունել **Սահմանադրություն**, ներդնել սեփական **արժույթը** (դրամ), կազմավորել հայկական զինված ուժեր՝ **բանակ**, որի անդրանիկ փորձությունները պակսվել են վերջին հազար տարվա կտրվածքով աննախադեպ փառավոր հաղթանակներով. **ազատագրված են Արցախն ու հարակից հայկական շրջանները**... Այսօր էլ, շարունակվող պատերազմի պայմաններում, մեր փառապանծ զինված ուժերը շարունակում են վերահսկել իրադրությունը, անառիկ պահել Հայաստանի Հանրապետության եւ Արցախի սահմանները...

շարունակությունը՝ էջ 3

### Խթանելով կորարարությունը

Տեղի է ունեցել «*Նորարարությունը՝ գործնականում, մարդիկ՝ կենտրոնում*» հանրային ոլորտի նորարարության համաժողովը, որը նվիրված է ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) 42և նորարարական կենտրոնի հիմնադրման 5-ամյակին:



Բացման հանդիսությանը ներկա են եղել ՀՀ նախագահ **Վահագն Խաչատրյանը**, ԿԳՄՍ նախարար **Վահրամ Դումանյանը**, ԲՏԱ նախարար **Ռոբերտ Խաչատրյանը**, Հայաստանում ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ **Նաթիա Նացվիչվիլին**, կրթության եւ տեխնոլոգիաների ոլորտների ներկայացուցիչներ:

ՀՀ նախագահ Վահագն Խաչատրյանը շնորհավորել է ԿԶՆ կենտրոնի աշխատակիցներին հինգ տարիների գործունեության համար, հաջողություն ու նոր ձեռքբերումներ է մաղթել, իույս հայտնել, որ նրանք հետագայում եւս կշարունակեն աշխատել նույնքան ոգեւորված եւ արդյունավետ: Նախագահը հատկապես բարձր է գնահատել թվայնացման ոլորտում կենտրոնի գործունեությունը:

շարունակությունը՝ էջ 2

## Կառավարություն

### Վերաբաշխում՝ բյուջեով հաստատված ծրագրերում

Կառավարության մի շարք որոշումներով՝ փոփոխություն է կատարվել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության 2022 թվականի բյուջեով հաստատված ծրագրերում: Վերաբաշխման արդյունքում գումար է հատկացվել 96 դպրոցի շենքային պայմանների, ինչպես նաեւ 114 դպրոցի եւ 8 մանկապարտեզի գույքային հագեցվածության բարելավումը ապահովելու նպատակով:



2022 թվականի պետական բյուջեով կապիտալ ծրագրերին հատկացված միջոցներից կատարվել է վերաբաշխում 1 մլրդ 933 մլն դրամ գումարի շրջանակում, որից 1 մլրդ 843 մլն՝ 96 դպրոցի շենքային պայմանների եւ 101 դպրոցի գույքային հագեցվածության բարելավման նպատակով:

Հարցը զեկուցել է ԿԳՄՍ նախարար **Վահրամ Դումանյանը**՝ նշելով, որ մարզպետարանների կողմից արդեն կնքվել են կապալային աշխատանքների եւ տեխնիկական հսկողության ծառայության գնման պայմանագրերը՝ «*Գնումների մասին*» օրենքին համապատասխան պայմանով հայտարարված մրցույթի արդյունքում: Ըստ նախագծի՝ գումարները հատկացվում են կնքված պայմանագրերին համապատասխան:

շարունակությունը՝ էջ 4

## Հասարակական խորհուրդ

### Երազանք կարելի է համարել երբեւէ կրթական օրենսգիրք ունենալը

ՀՀ ԿԳՄՍ նախարարին կից հասարակական խորհրդի հերթական նիստը վարել է խորհրդի նախագահ, նախարար **Վահրամ Դումանյանը**: Նիստին մասնակցել է նաեւ ՄԿՈՒ ոլորտը համակարգող նախարարի տեղակալ **Ժաննա Անդրեասյանը**:



Նիստի օրակարգում ներառված էր մեկ հարց՝ «*Մասնագիտական կրթության եւ ուսուցման մասին*» օրենքի, ինչպես նաեւ հարակից մի շարք օրենքներում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին նախագծերի ներկայացում:

շարունակությունը՝ էջ 4



Կրթության բարելավման ծրագիր

1.695.000 եվրո՝ բուհերում նորարարական եւ զարգացման ծրագրերի իրականացման համար

Հայաստանի Հանրապետությունը, Համաշխարհային բանկի հետ համագործակցությամբ, իրականացնում է «Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագիրը, որի շրջանակում մեկնարկել է բուհերին դրամաշնորհների տրամադրման Նորարարությունների մրցակցային հիմնադրամի նոր շրջափուլը՝ ԲՏԵՄ ուղղությամբ:

Բուհերին դրամաշնորհների տրամադրման համար նախատեսված բյուջեն կազմում է 1.695.000 եվրոյին համարժեք 33 դրամ, ընդ որում՝ յուրաքանչյուր անհատական ծրագրերի համար նախատեսվում է առավելագույնը 250.000 եվրոյին համարժեք 33 դրամ, իսկ կոնսորցիումային ծրագրերի համար՝ 500.000 եվրոյին համարժեք 33 դրամ: Վարկային ծրագիրը իրականացնում է

ԿԳՄՍ նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ը:

ՆԱՀ դրամաշնորհները մրցակցային հիմնադրամի շրջանակում մեկնարկել էր դրամաշնորհային ծրագրերի մրցույթի գործընթացը, եւ հայտերի ընդունման վերջնաժամկետ էր սահմանվել 2022 թվականի նոյեմբերի 21-ը: Արդյունքում՝ դրամաշնորհային մրցույթին հետաքրքրվածության հայտ է ներկայացրել 11 բուհ: Համաձայն ՆԱՀ ղեկավար ձեռնարկի՝ հայտերի ընդունման հետո իրականացվելու է հայտերի իրավասության եւ ամբողջականության գնահատում, որից հետո իրավասու եւ ամբողջական հայտերը գնահատելու են անկախ փորձագետները, իսկ հայտերի ֆինանսավորման վերջնական որոշումն իրականացնելու է ՆԱՀ անկախագող խորհուրդը:

Վան կարողությունները:

2022 թվականի սեպտեմբերի 19-ից Նորարարությունների մրցակցային հիմնադրամի շրջանակում մեկնարկել էր դրամաշնորհային ծրագրերի մրցույթի գործընթացը, եւ հայտերի ընդունման վերջնաժամկետ էր սահմանվել 2022 թվականի նոյեմբերի 21-ը: Արդյունքում՝ դրամաշնորհային մրցույթին հետաքրքրվածության հայտ է ներկայացրել 11 բուհ: Համաձայն ՆԱՀ ղեկավար ձեռնարկի՝ հայտերի ընդունման հետո իրականացվելու է հայտերի իրավասության եւ ամբողջականության գնահատում, որից հետո իրավասու եւ ամբողջական հայտերը գնահատելու են անկախ փորձագետները, իսկ հայտերի ֆինանսավորման վերջնական որոշումն իրականացնելու է ՆԱՀ անկախագող խորհուրդը:

դրամաշնորհների տրամադրման գործընթացը մեկնարկել է «Կրթության որակ եւ համապատասխանություն» վարկային երկրորդ ծրագրի շրջանակում, որի արդյունքում իրականացվել են 10 նորարարական ծրագրեր: «Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակում կազմակերպվել է բուհերին դրամաշնորհների տրամադրման երեք շրջափուլ, որոնց ընթացքում իրականացվել են 18 նորարարական ծրագրեր, ինչի արդյունքում բուհերում ստեղծվել են ժամանակակից սարքավորումներով հագեցած նորարարական կենտրոններ, լաբորատորիաներ եւ այլ ենթակառուցվածքներ: Բուհերի կողմից իրականացվող նորարարական ծրագրերը մեծապես կարելի էր են ոչ միայն վերջիններիս կրթական, գիտական ու հետազոտական կարողությունների հզորացման, իրականացվող դասավանդման եւ ուսումնառության համար գործնական հենք ապահովելու, այլ նաեւ բուհ-աշխատաշուկա եւ կրթություն-գիտություն-բիզնես կապի ապահովման տեսանկյունից:



ճան, իրականացվող դասավանդման եւ ուսումնառության համար գործնական հենք ապահովելու, այլ նաեւ բուհ-աշխատաշուկա եւ կրթություն-գիտություն-բիզնես կապի ապահովման տեսանկյունից:

Հեղինակ՝ ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Խթանելով նորարարությունը

սկիզբը՝ էջ 1

«Այսօր շատ կարելի էր են մոտեցումները պետական մակարդակով տվյալների փոխանցման աշխատանքներում: Հույս ունեն, որ նոր, առանձնահատուկ ուշադրություն կդարձնեք այդ աշխատանքներին, քանի որ մեր զարգացման ապագան փոխանցման մեջ է, առանց որի նոր հաջողություններ մենք չենք կարող արձանագրել»,- ասել է Վահագն Խաչատրյանը:

Բացման խոսքով հանդես է եկել ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը՝ նշելով, որ համաժողովը լավ առիթ է անդրադարձնալու Հայաստանում նորարարության խթանմանն ուղղված պետության եւ հասարակության ջանքերին:

«Դեռես տարեսկզբից 33 կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը շրջանառության մեջ է դրել «Հայաստանի Հանրապետության կրթության մինչեւ 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը», որի առանցքում մարդկային կապիտալի զարգացումն ու իրացումն են գիտելիքի ու ստեղծարարության խթանման միջոցով:

Այս ուղենշումը պատահական չէ. նախարարության վարած քաղաքականությունը միտված է կրթության միջոցով ամհատի կարողության բացահայտմանը եւ շարունակական զարգացմանը: Այս ճանապարհին նորարարությունը բովանդակային առաջընթացի եւ ապագայի մարտահրավերներին դիմակայելու կարելիությունը նախապայմաններից է:

Վերջին տարիների համաշխարհային տարբեր ճգնաժամերի ազդեցությունն առանձնակի նկատելի էր կրթության ոլորտում: Հատկապես համավարակով եւ պատերազմական իրավիճակով պայմանավորված՝ Հայաստանում կրթություն ստանալու իրավունքի



իրացումն ուղղակիորեն կախված էր նոր տեխնոլոգիական գործընթացների եւ նորարարական գործիքակազմների ներդրումից, դրանց արագորեն հարմարվելու ճկունությունից:

Սա անսպասելի եւ չնախատեսված իրավիճակ էր, որի ելքը դարձյալ նորարարությունն էր, ինչին ձեռնամուխ եղանք մեր ողջ ներուժի գործադրմամբ եւ հնարավորությունների կիրառմամբ:

Նորարարության հետեւողական կիրառումը լի է մարտահրավերներով: Այս գործընթացը ենթադրում է ոչ միայն պատասխանատվության եւ հանձնառության ստանձնում ամենաբարձր մակարդակում՝ քաղաքականություններ մշակելիս, այլեւ ամենօրյա աշխատանք բոլոր օղակներում՝ հանրային ծառայողներից մինչեւ մասնագետներ, մանկավարժներ, սովորողներ եւ անհատներ՝ փոխելու վերաբերմունքն ու խթանելու նորարարությունը: Անհրաժեշտ է ջանքերի մեկտեղում գերատեսչությունների ներսում, ինչպես նաեւ համագործակցություն այն կառույցների հետ, որոնք կրում են նորարարությունն ու դրա շարժիչ ուժն են տարբեր ոլորտներում»,- նշել է

Վահրամ Դումանյանը:

Նախարարի խոսքով՝ կրթության ոլորտում նորարարության զարգացումը խթանող առաջնային օղակներից են առաջատար համալսարանները, Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը, կրթական եւ հասարակական մյուս կառույցները:

Վահրամ Դումանյանն անդրադարձել է նաեւ 33 ԿԳՄՍ նախարարության եւ Կայուն զարգացման նպատակների նորարարական կենտրոնի հետ համատեղ ստեղծված հարթակին. կենտրոնի կողմից ներդրվել է նաեւ գործիքակազմ խթանելու STEM (ԳՏԵՄ) ուղղվածության ընտրությունը երեսնի ավագ դպրոցների աշակերտների շրջանում:

«Լիախույս եմ, որ միասին կշարունակենք լինել նույնքան վճռական ու հետեւողական տարածելու նորարարությունը Հայաստանում եւ մեկտեղելու մեր ջանքերը՝ ամրապնդելու մեր դիրքերն աշխարհի նորարարության քարտեզում՝ ի նպաստ մեր աշակերտների, ուսանողների, որոնք ապագայի շարժիչ ուժն են»,- խոսքը եզրափակել է նախարարը:

ԲՏԱ նախարար Ռոբերտ Խաչատրյանն ընդգծել է, որ կենտրոն

նի հետ տարբեր ուղղություններով արդյունավետ համագործակցությունը ծավալվել է՝ առանձնացնելով հատկապես թվայնացման ռազմավարության մշակման գործընթացը:

«Դեռես 2021 թ. Հայաստանի փոփոխության ռազմավարությամբ եւս մեկ անգամ վերահաստատվել է 33 բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության հանձնառությունը՝ առաջնորդելու փոխակերպումը պետական կառավարման համակարգում, խթանելու հանրային ու մասնավոր ոլորտների միջեւ երկխոսության ամրապնդմանը, նպաստելու փոխադարձ տեխնոլոգիաների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը»,- ասել է Ռոբերտ Խաչատրյանը:

Համաժողովի շրջանակում տեղի է ունեցել «Նորարարության հիմնական միտումներն ու մարտահրավերները» պանելային քննարկումը, որին մասնակցել է ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանը:

Նա ներկայացրել է նախ համավարակի, ապա պատերազմի պայմաններում կրթության շարունակականության ապահովմանն ուղղված գործընթացները նորարարության համատեքստում. «Մենք հայտնվել էինք մի փուլում, երբ առանց նորարարության հնարավոր չէր ապահովել կրթության շարունակականությունն ամբողջ աշխարհում: Դա նաեւ այն փուլն էր, երբ սկսեցինք հանրակրթության ոլորտում ակտիվ բարեփոխումները: Եվ կարելի է ասել՝ ճգնաժամն ինչ-որ առումով նաեւ հնարավորություն էր այդ բարեփոխումների ճանապարհին: Մենք կատարել էինք հետազոտությունն ուսուցիչների շրջանում, եւ պետք է փաստենք դրանց արդյունքում նրանցից ոչ մեկը չէր նշել հեռավար դասընթացի կազմակերպման հնարավորությունն ունենալու մասին: Պետությունը ստեղծեց

գործիքներ՝ աջակցելու մանկավարժներին, եւ մեր ուսուցիչները եղան ամենանորարարը»:

Ժաննա Անդրեասյանի գնահատմամբ՝ համավարակի պայմաններում կրթության իրավունքի իրացման ապահովման բոլոր մակարդակներում ուժեղ եւ ռեսուրսները մեկտեղվել են, ձեռք են բերվել անհրաժեշտ հնարություններ, եւ այդ իրավիճակում ամենատուժած ոլորտներից մեկը կրթական համակարգը, կարողացավ հաղթահարել թռիչքային զարգացմամբ: ԿԳՄՍ փոխնախարարը նշել է նաեւ, որ չնայած ֆիզիկական հարդողակցման սահմանափակումներին՝ այդ փուլում հանրային լայն արձագանք է գտել նաեւ հանրակրթական նոր չափորոշիչների ներդրման նախագիծը, որը հաստատվել է 2021 թ. փետրվարին:

«Չվախենալ ու պատրաստ լինել փոփոխություններին եւ լինել բաց եւ թափանցիկ խոսակցելով թյուրքմակումներից»,- ընդգծել է Ժ. Անդրեասյանը՝ որպես կարելի սկզբունքներ բարեփոխումների ճանապարհին:

Քննարկման բանախոսներն էին նաեւ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի առաջին տեղակալ **Գեորգ Սանթաշյանը**, Առողջապահության նախարարի առաջին տեղակալ **Լենա Նանուշյանը**, Երեսնի քաղաքապետի տեղակալ **Տիգրան Ավինյանը**, ՄԱԶ հայաստանյան գրասենյակի նորարարության եւ ԿԶՆ ֆինանսների պորտֆելի ղեկավար **Տաթևիկ Քոլոյանը**:

Նշենք, որ «Նորարարությունը՝ գործնականում, մարդիկ կենտրոնում» հանրային ոլորտի նորարարության համաժողովը կազմակերպվել է ՄԱԶ հայաստանյան գրասենյակի ԿԶՆ նորարարական կենտրոնի, ՄԱԿ եւ 33 կառավարության համատեղ նախաձեռնությամբ:



## Անկախությունը եւ մենք Սթափության հրավեր

սկիզբը՝ էջ 1

Արդյո՞ք մենք լիովին գիտակցում ենք ասվածը: Մեր պատմության եւ մեր ներկայի համար բացառիկ մեծ նշանակություն ունեցող այս փաստերի հիշատակումը հաճախ ոչ միայն ոգեւորություն է հաղթանակիցներից շատերի ջղագրգիռ բացասական արձագանքը... Երեկ դու ԶԶԸ-ական էիր, ապա այսօր իշխանամետ ես, եթե փորձում ես հիշեցնել այն ամենը, ինչով մեծապես կհպարտանար աշխարհիս որեւէ ազգի ներկայացուցիչ, եթե ինքը լիներ թվարկվածի տերը: Ինչո՞ւ է այսպես: Մի՞թե թվարկված նվաճումները կեղծ են: Քավ լիցի: Դրանք իրական են այնքան, որքան, ասենք, Դու՝ ընթերցողդ, որ հիմա կարդում ես այս տողերը: Զապա, որո՞նք են նման ջղագրգռության կամ ձեռք բերված արժեքների, մեղմ ասած, թերի ըմբռնման պատճառները: Իհարկե, առաջին հերթին հնարավոր ընդդիմախոսները կվկայակոչեն **տնտեսական դժվարությունները եւ արտագաղթը:**



անկախության արշալույսին: Նաեւ՝ մեր հայրենակիցներն այսօր էլ աշխատում են եւ արարում, դարձյալ ստեղծում արժեքներ: Սակայն մեր մտահոգությունները հիմնավոր են այնքանով, որքանով մեզանում այսօր չկա այն **համահայկական ոգեւորությունը**, որ 1988-ին մեզ դարձրեց **ամենամիասնական ազգն աշխարհում**, ինչը շուտով տվեց իր բարի պտուղները: Եվ ապա՝ մեր հոգեբանության մեջ այդպես էլ չծեւակորվեց **հաղթողի հավաքական նկարագիրը**, ինչը պիտի լիներ բնական Արցախի ազատագրման փաստով պայմանավորված: Իսկ հաղթողի նկարագիրը իր հետ պիտի բերեր **լավատեսություն**, ինչը ցանկացած անցումային շրջանի համար ավելի կարեւոր գործոն է, քան օտարերկրյա ֆինանսական ներդրումները:

Զնարավոր է՝ մեզանում զանգվածային լրատվամիջոցները, նոր-նոր յուրացնելով խոսքի **ազատության եւ արեւմտյան լրագրության** մյուս սկզբունքները, նաեւ, ներգրավվելով մեղ կուսակցական կամ քաղաքական խմբային շահերի պաշտպանության մեջ, հեռացան **ազգային արժեքների տարփողմամբ**, ազգային խնդիրների վերլուծությամբ ու մեկնաբանմամբ՝ **ազգային գաղափարախոսության քարոզչությունից**, եւ դաշտը մնաց բաց: Անցման շրջանի դժվարությունների հետեւանքով **կրթության եւ նշակույթի** բնական նահանջները եւ երիտասարդությանը դուրս բողբոջին **հայեցի դաստիարակության** ծիրից:

Աղանդներն էլ, իրենց հերթին, խեղեցին ժողովրդի հոգեբանությունը, դրան գունարկեց նաեւ համահարեցման (գլոբալիզացիայի) **անհատակենտրոն** բարոյականության ներմուծումը, եւ մեր **ազգային նկարագիրը** սկսեց ճաքճքել: Այ, այստեղ է, որ տնտեսական դժվարությունները կարողացան մեզանից շատերին ծնկի բերել: Թվում է՝ կախարդական շրջանակի մեջ ենք ընկած. տնտեսական դժվարությունները հուսահատեցնում են, իսկ այդ դժվարությունները հաղթահարելու համար լավատեսություն է պետք:

Մտքերի այս ընթացքը կարելի է շարունակել երկար, եւ ընթերցողը նույնիսկ կարող է ծանձրանալ է՝ սիրելի հեղինակ, ինչ որ ասում ես, ե՞ս էլ գիտեմ, եւ՝ քեզանից լավ... Ի վերջո, ի՞նչ ես **առաջարկում**: Շատ «փոքրիկ» մի բան, սիրելի՛ ընթերցող, **վերականգնի՛ր հիշողությունդ**: Մի՛ մոռացիր, որ Դու **անկախությունը** նվաճել ես, չէ՞ որ Դու էիր ձգտում, եւ՝ երկար տարիներ: Մի չհիմովհիկի կամ ապաշնորհի ու նյութապաշտ մի քաղաքական գործչի պատճառով մի փնովիր **երկիրը** ու **պետությունը**, վաղը Քո՛ գավակն է նստելու ամենաբարձր աթոռներից: Մի՛ մոռացիր, որ Դու **տաղանդավոր** ես, մի՛ ընկճվիր ու ձեռնարկի՛ր **գործը՝** ըստ Քո շնորհքի ու կարողության, մի՛ երկնջիր դժվարություններից, չէ՞ որ Դու **հայ** ես՝ քարից հաց քամող: Մի՛ ամաչիր **աշխատանքից**. Զայաստանում անմշակ հողեր որքան ուզես, աշխատանք՝ որքան ուզես,

մի՛ սպասիր, որ ուրիշներն առաջարկեն, ինքդ ստեղծիր, ինքդ կազմակերպիր աշխատատեղդ, աշխատադաշտդ: Մի՛ մոռացիր, որ Դու **բարոյական** ես, երբեք մի՛ օգտվիր Քո հայրենակցի թշվառ վիճակից, մի՛ թույլ տուր, որ նա Քո ներկայությամբ լինի անբարո, չէ՞ որ Քո երեխաներն ապրում են նո՛ւյն երկրում, նո՛ւյն բանն են տեսնում. հանկարծ չկրկնեն: Մի՛ մոռացիր, որ Դու **առաջին** ես հավատացել **Աստուծո Որդուն**, թույլ մի՛ տուր, որ աղանդները Քեզ Քո **Մայր եկեղեցուց** հեռացնեն: Նա Քեզ միշտ պաշտպանել է ու հովանավորել եւ այսօր էլ պատրաստ է շարունակել իր առաքելությունը: Մի՛ մոռացիր, որ Դու միշտ ապավինել ես **գիտելիքին**, ձգտել, որ Քո գավակներն ուսում ստանան: Այսօր էլ **գի՛րքը**, գիտելիքը պիտի փրկեն Քեզ, առավել եւ ավելի շատ, քան մի փշուր հացը կամ գրոշը, որ Քո մեկնած ձեռքում կարող է դնել օտարը կամ Քո երկրացին... Այս **«մի՛ մոռացիր»**-ների շարքը եւս, սիրելի՛ ընթերցող, ինքդ կարող ես երկար շարունակել: Ուրեմն՝ արի՛ միասին պարզապես մի բան չմոռանանք. ուզենք, թե չուզենք, մենք **հայ** ենք, իսկ հայը իր տեսակով չի կարող վատը կամ աղքատ լինել: Ուզենք, թե չուզենք, Աստված մեզ **Զայաստան** երկիրն է տվել՝ որպես բնակավայր, որպես **հայրենիք**, որպես տուն: Իսկ հայը չի՛ կարող իր **տունը**, իր **օջախը**, իր **ընտանիքը** չսիրել: Արի պարզապես **սիրե՛նք միմյանց** ու մեր հայրենիքը եւ **ատե՛նք** այն, ինչը մեզ շեղում է հայի մեր տեսակից ու Զայաստանը՝ հայրենիք լինելու վեհությունից... Արի **հավատա՛նք**, որ այսօր, անկախ բոլոր դժվարություններից, մեզ հուսահատության մոլոր բոլոր ճղճիմ գաղափարներից, տրտուներներից ու բողոքականությունից, արդեն իսկ ոտք ենք դրել **Անկախություն** կոչվող այն **սուրբ** ուղու վրա, որը մեզ տանում է դեպի մեր անձնական ու անանձնական **Արարատները**: Սիրենք, ատենք եւ հավատանք, որ անկախությունը լինի **Անկախություն**, երկիրը՝ **երկիր**, մենք՝ **Զայ**:

Գ.Ս.

«Կրթություն», թիվ 50, 02.12.2015 թ.

**3. Գ.-** Յոթ տարի առաջ հրապարակված այս հոդվածը, կարծում ենք, այսօր էլ չի կորցրել իր ասելիքի այժմեականությունը, մասնավորապես մեր հոգեւոր էլ ավելի են շատացել, ծանրաբեռնել մեր միտքն ու հոգին, հատկապես՝ վերջին պատերազմի հետեւանքներով... Եւ մեր սթափության ամհրաժեշտությունը դարձել է էլ ավելի հրատապ:







Աշխարհի հետ

Երկկողմ համագործակցությունն ընդլայնելու համար

ՀՀ ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը ընդունել է ՀՀ-ում Կանադայի արտակարգ և լիազոր դեսպան Էլիսոն Մարի Լըբլերին: Հանդիպմանը մասնակցել է նաև ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը:



Ողջունելով դեսպանին՝ նախարար Վահրամ Դումանյանը կարեւորել է Կանադայի հետ բարեկամական հարաբերությունները եւ վստահություն հայտնել, որ կրթության, գիտության, մշակույթի, սպորտի եւ երիտասարդության ոլորտներում անհրաժեշտ է ընդլայնել ու զարգացնել երկկողմ համագործակցությունը: Վահրամ Դումանյանի խոսքով՝ նախարարությունը համակարգում է ոլորտների բավականին լայն շրջանակ՝ նախադպրոցական կրթությունից մինչեւ սպորտ, եւ հետեւաբար յուրաքանչյուր ընտանիք առնչվում է ԿԳՄՍ նախարարության աշխատանքների հետ:

Դումանյանը կարեւորել է նաև մշակույթի եւ սպորտի ոլորտներում, տեղեկատվական տեխնոլոգիաների եւ գյուղատնտեսական կրթության ուղղությամբ հայ-կանադական հնարավոր փոխգործակցության հարցերը:

Նախարարն անդրադարձել է Կանադայի միջազգային զարգացման գործակալության (CIDA) կողմից կրթության եւ երիտասարդության ոլորտում Հայաստանում ծրագրերի իրականացման միջոցով: Վահրամ Դումանյանը հնարավորությունը ՄԿՈՒ ոլորտում, ինչպես նաև վերապատրաստման եւ հավաստագրման ուղղություններով՝ ինստիտուցիոնալ գործընկերության ու փորձի փոխանակման հնարավորությամբ:

Դեսպան Էլիսոն Մարի Լըբլերը, շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, շնորհավորել է «ՀՀ կրթության մինչեւ 2030 թվականը զարգացման պետական ծրագրի» հաստատման կապակցությամբ՝ ընդգծելով, որ դրա կարեւոր բաղադրիչներից մեկը միջազգայնացումն է: Նրա խոսքով՝ այս տարի Հայաստանի եւ Կանադայի միջեւ տեղի են ունեցել դրական զարգացումներ, եւ երեւանում Կանադայի դեսպանատան բացումը կնպաստի այդ հարաբերությունների առավել սերտացմանը:

Դեսպանը նշել է, որ Կանադան ցանկանում է աջակցել Հայաստանի ժողովրդավարությանը եւ բարգավաճմանը, իսկ այդ նպատակներին հասնելու համար կրթությունը մեծ դեր ունի: Նրա խոսքով՝ Կանադայի կրթական համակարգն աշխարհում լավագույններից է: Այն ունի ճանաչված եւ մրցունակ բուհեր, հետազոտական հաստատություններ ու բավականին ճկուն ծրագրեր ՄԿՈՒ ոլորտում՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան: Դեսպանը առաջարկել է դիտարկել հնարավոր համագործակցությունը ՄԿՈՒ ոլորտում, ինչպես նաև վերապատրաստման եւ հավաստագրման ուղղություններով՝ ինստիտուցիոնալ գործընկերության ու փորձի փոխանակման հնարավորությամբ:

Վահրամ Դումանյանը վերահաստատել է ՄԿՈՒ ոլորտում համագործակցության հնարավորությունը՝ ընդգծելով, որ այն մեր երկրի համար ունի ռազմավարական նշանակություն, եւ ներկայում այդ ուղղությամբ իրականացվում են օրենսդրական բարեփոխումներ: Որպես համագործակցության հաջողված օրինակ՝ Վահրամ Դումանյանը մատնանշել է Տավուշի Պատրիկ Տէվեճեան տարածաշրջանային քոլեջում ֆրանսիական մոդելի տեղայնացման փորձը՝ ակնկալելով մասնօրինակ գործակցության հնարավորություն նաև Կանադայի գործընկերների հետ, այդ թվում՝ մեր հայրենակիցների մասնակցությամբ:

Հանդիպմանը քննարկվել են նաև երկուստեք հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ֆրանսերեն դասավանդողների միջազգային օրվա առիթով

Հայաստանում Ֆրանսիայի դեսպանությունը կազմակերպել է ընդունելություն միջազգային օրվա:

Միջոցառմանը մասնակցել են ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանը, ինչպես նաև ֆրանսերենի ուսուցիչներ՝ ՀՀ տարբեր ուսումնական հաստատություններից, որոնց անձամբ ողջունել է մասնագիտական տոնի առթիվ շնորհավորել է ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպան Անն Լույոն:



Դեսպանը նաև շնորհակալություն է հայտնել ուսուցիչներին՝ իրենց ամենօրյա ջանքերի համար, որ գործի են դնում հայ աշակերտներին ֆրանսերեն սովորեցնելու եւ ֆրանսերեն ավելի մասսայական դարձնելու համար: Անն Լույոն կարեւորել է այս տարվա հունվարին երեւանում Ֆրանսիական ինստիտուտի բացումը, որը դառնալու է ֆրանսերենի տարածման եւս մեկ կենտրոն՝ համալրելով Հայաստանում ֆրանսիական համալսարանի, Անատոլ Ֆրանսի անվան ֆրանսիական կրթական կենտրոնի եւ ֆրանսախոս այլ կենտրոնների շարքը: ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանը եւս շնորհավորել է ֆրանսերեն դասավանդող ուսուցիչներին կարեւորելով նրանց դերակատարությունը Հայաստանի կրթական համակարգում:

«Ֆրանսերենի ուսուցիչների միջազգային օրը կարեւոր է նախ այն առումով, որ ընդգծում է ուսուցիչ հատուկ դերը՝ շեշտելով մանկավարժական աշխատանքի առաջնային նշանակությունը: Շնորհակալ եմ՝ ձեր կողմից ամեն օր կատարվող բավական դժվար եւ երբեմն, թվում է, անշնորհակալ, բայց իրականում շատ շնորհակալ աշխատանքի համար: Շատ կարեւորում եմ նաև այն, որ մենք խոսում ենք հենց ֆրանսերենի ուսուցիչների մասին: Սա հնարավորություն է, որով դուք ձեզ զգում եք մի մեծ համայնքի մաս՝ այդպիսով ապահովելով մեր ուսուցիչների ներդրումն այս գլոբալ համայնքում»,- ասել է Ժաննա Անդրեասյանը:

Մասնագիտական որակավորման ստացման ստանդարտ տեւողությունը, օրինակ, կարող է լինել մեկ տարի, որից հետո որակավորված մասնագետն արդեն կզբաղվի աշխատանքային գործունեությամբ»,- ասել է Ժաննա Անդրեասյանն ու անդրադարձել նաև կրթական հաստատությունների առանձին իրավակազմակերպական կարգավիճակ ունենալու հարցին, որը նաև հնարավորություն կընձեռի ավելի ճկուն լուծումներ գտնել: «Օրինակ՝ կրթական հիմնադրամը սահմանել որպես կազմակերպության տիպ, եւ դրանով իսկ տալ առանձնահատուկ գործունեության հնարավորություններ: ՄԿՈՒ համակարգում առկա են հաստատություններ, որոնք հատուկ նշանակություն ունեն, օրինակ՝ ռազմարդյունաբերության համար կամ Գյուլնարու տեխնիկական քոլեջը, որը երկաթուղային գործի մասնագետներ պատրաստող միակ հաստատությունն է: Գտնում ենք, որ հանրապետական նշանակություն ունեցող հաստատությունները կարող են ունենալ ամբողջական պետական ֆինանսավորում, եւ դրանց կառավարման մոդելը կարող է լինել այլ, քան ներկայացված ստանդարտ տարբերակը»,- նշել է նախարարի տեղակալը՝ հավելելով, որ մյուս արմատական փոփոխությունը վերաբերում է աշխատանքի վրա հիմնված ուսուցմանը:

Մասնագիտական որակավորման ստացման ստանդարտ տեւողությունը, օրինակ, կարող է լինել մեկ տարի, որից հետո որակավորված մասնագետն արդեն կզբաղվի աշխատանքային գործունեությամբ»,- ասել է Ժաննա Անդրեասյանն ու անդրադարձել նաև կրթական հաստատությունների առանձին իրավակազմակերպական կարգավիճակ ունենալու հարցին, որը նաև հնարավորություն կընձեռի ավելի ճկուն լուծումներ գտնել:

Հասարակական խորհրդի անդամները մի շարք հարցեր են ուղղել նախարարին, նրա տեղակալին եւ հիմնական զեկուցողին, որոնք, մասնավորապես, վերաբերել են ուսումնական ծրագրերում աշխատանքի կարեւորության եւ համապատասխան մշակույթի ձեւավորման, ծրագրերի ճկունության եւ երեկոյան ժամերին դասերի անցկացման կամ վիդեոդասերի հնարավորության, մշակութային մասնագիտությունների առանձնահատկություններին, ընդունելության եւ քոլեջից բուհ անցման, մասնագիտական կողմնորոշման խնդիրներին: Խորհրդի անդամներին հետաքրքրել են նաև դասավանդողներին ներկայացվող պահանջների, ՄԿՈՒ հաստատություններում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության, համապատասխան պայմանների ապահովման եւ կարիքի զննահատման, դուրս կրթության եւ աշխատանքի վրա հիմնված ուսուցման ֆինանսավորման, ոչ ֆորմալ կրթության, սոց-գործընկերության, խորհուրդներում ուսանողական համայնքների ներգրավվածության վերաբերյալ հարցերը:

Նիստի ավարտին ԿԳՄՍ նախարարին կից հասարակական խորհուրդը հավանություն է արժանացրել «Մասնագիտական կրթության եւ ուսուցման մասին» օրենքի, ինչպես նաև հարակից մի շարք օրենքներում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին նախագծերը:

Հեղինակ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Երազանք կարելի է համարել երբեւէ կրթական օրենսգիրք ունենալը

սկիզբը՝ էջ 4

«Այն, իրոք, ոլորտի ամբողջական վերանայմանն ուղղված փաստաթուղթ է, եւ ակնհայտորեն փաթեթը կարիք ունի վերանայման. դրույթներ կան, որ հաստատապես ենթաօրենսդրական ակտերի կարգավորման տիրույթում են: Կա մի քանի կետ, որոնց շուրջ դեռեւս չունենք վերջնական դիրքորոշում, ինչպես օրինակ՝ կրթական ծրագրերի տեւողությունը: 9-րդ դասարանից հետո կրթությունը ՄԿՈՒ համակարգում շարունակելու դեպքում այն համարվում է նաև հանրակրթության մաս, եւ 12 տարին պարտադիր պետք է լրացվի: Կարծում ենք՝ առավելագույնը քննարկման ենթակա է այն հարցը, որ պարտադիր դարձնենք ոչ թե կրթության 12-ամյա տեւողությունը, այլ 9-րդ դասարանից հետո կրթության շարունակականությունը, սակայն եթե այն ապահովվում է միայն արհեստագործական ծրագրի շրջանակում»:

Մասնագիտական որակավորման ստացման ստանդարտ տեւողությունը, օրինակ, կարող է լինել մեկ տարի, որից հետո որակավորված մասնագետն արդեն կզբաղվի աշխատանքային գործունեությամբ»,- ասել է Ժաննա Անդրեասյանն ու անդրադարձել նաև կրթական հաստատությունների առանձին իրավակազմակերպական կարգավիճակ ունենալու հարցին, որը նաև հնարավորություն կընձեռի ավելի ճկուն լուծումներ գտնել: «Օրինակ՝ կրթական հիմնադրամը սահմանել որպես կազմակերպության տիպ, եւ դրանով իսկ տալ առանձնահատուկ գործունեության հնարավորություններ: ՄԿՈՒ համակարգում առկա են հաստատություններ, որոնք հատուկ նշանակություն ունեն, օրինակ՝ ռազմարդյունաբերության համար կամ Գյուլնարու տեխնիկական քոլեջը, որը երկաթուղային գործի մասնագետներ պատրաստող միակ հաստատությունն է: Գտնում ենք, որ հանրապետական նշանակություն ունեցող հաստատությունները կարող են ունենալ ամբողջական պետական ֆինանսավորում, եւ դրանց կառավարման մոդելը կարող է լինել այլ, քան ներկայացված ստանդարտ տարբերակը»,- նշել է նախարարի տեղակալը՝ հավելելով, որ մյուս արմատական փոփոխությունը վերաբերում է աշխատանքի վրա հիմնված ուսուցմանը:

Հասարակական խորհրդի անդամները մի շարք հարցեր են ուղղել նախարարին, նրա տեղակալին եւ հիմնական զեկուցողին, որոնք, մասնավորապես, վերաբերել են ուսումնական ծրագրերում աշխատանքի կարեւորության եւ համապատասխան մշակույթի ձեւավորման, ծրագրերի ճկունության եւ երեկոյան ժամերին դասերի անցկացման կամ վիդեոդասերի հնարավորության, մշակութային մասնագիտությունների առանձնահատկություններին, ընդունելության եւ քոլեջից բուհ անցման, մասնագիտական կողմնորոշման խնդիրներին: Խորհրդի անդամներին հետաքրքրել են նաև դասավանդողներին ներկայացվող պահանջների, ՄԿՈՒ հաստատություններում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության, համապատասխան պայմանների ապահովման եւ կարիքի զննահատման, դուրս կրթության եւ աշխատանքի վրա հիմնված ուսուցման ֆինանսավորման, ոչ ֆորմալ կրթության, սոց-գործընկերության, խորհուրդներում ուսանողական համայնքների ներգրավվածության վերաբերյալ հարցերը:

Նիստի ավարտին ԿԳՄՍ նախարարին կից հասարակական խորհուրդը հավանություն է արժանացրել «Մասնագիտական կրթության եւ ուսուցման մասին» օրենքի, ինչպես նաև հարակից մի շարք օրենքներում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին նախագծերը:



Գրականագիտական

Եղիշե Զարենցի կյանքն ու ժամանակը. 1920 թվական

սկիզբը՝ «Կրթություն», թիվ 46

1920, 30 հոկտեմբեր – Կարսի անկումը: Չորսվար Սեպուհ. «Եթե տվի՞նք Կարսը, կորավ Գայաստանը եւ կլինի մեր գերեզմանը»:

Կարսում սպանվածների թիվը, ըստ Ա. Խատիսյանի, 3.500 մարդ էր («Ղայաստանի Գայաստանի ժառանգումն ու զարգացումը», Բեյրութ, 1968, էջ 279), Կարս քաղաքում մնացած խաղաղ բնակչության թիվը՝ 7.000: Կարսը գրավելուց հետո երեք օր քաղաքը հանձնվել է գործի ավան-թախանին ու հաշվեհարդարին, որին զոհ է գնացել շուրջ 6.000 հայ: Ըստ Ավետիս Ահարոնյանի՝ Կարսի անկումից հետո թուրքիա է գերեզմարվել 8.000 հայ, որից վերադարձել է 700-ը (Ա. Ահարոնյան, «Սարդարապատից մինչեւ Սեւր եւ Լոզան. Քաղաքական օրագիր», Բուսուր, 1943, էջ 143):

Մարզն անցնում է Թուրքիայի վերահսկողության ներքո, ինչը վավերացվում է 1920 թ. դեկտեմբերի 3-ին, երբ արդեն գոյություն չունեցող կառավարության անունից Ա. Խատիսյանն ու Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանյանը ստորագրում են հայ-թուրքական հաշտության ամոթալի դաշնագիրը, հաջորդում է 1921 թ. Կարսի պայմանագիրը, որով հայոց այդ ոստանը տրվում է դարավոր ոսոխին [տես՝ Կարսի նահանգապետ Ա. Ղորղանյանի հուշերը՝ «Կարսի մարզը Գայաստանի Գայաստանի տնտեսական կազմում» (1919, ապրիլ – 1920, հոկտեմբեր)], Երեւան, 2018]:

Կարսի խայտառակ, ամոթալի պարտության իրադարձությունների անմիջական տպավորություններով են գրված Գարեգին Գյուլստանյանի օրագրերը (տես՝ «Պայքար», բացառիկ, Բուսուր, 1943; առանձին գրքով՝ «Կյանքիս ամենատխուր օրը եւ երջանկության ժամը», Անթիլիաս, 1982; «Բանբեր Գայաստանի արխիվների», 1989, թիվ 3) եւ Գայաստանի նախարարներից բժիշկ Արտաշես Բաբայանի «Կարսի անկումը» հուշերը («Ղայաստան», 1923, թիվ 12): Երկուսն էլ այդ օրերին հայտնվել են թուրքական գերութային մեջ:

Կարսի անկման պատճառը հայոց բանակի բարոյալքումն ու կազմալուծումն էր: «20 սեպտեմբեր, 1920» թվագրությամբ բոլշևիկների կողմից տարածվել էր «Ղուժ գաղտնի» թռուցիկը.

«Ղայաստանի կոմունիստների (բոլշևիկների) կենտրոնական կոմիտեն հրահանգում է կուսակցության բոլոր կազմակերպություններին թե՛ թիկունքում, թե՛ ռազմական գոտիներում եւ հատկապես Կարսի գարնիզոն մեկնող բոլշևիկներին, անհատ զինվորների շրջանում եւ հավաքություններում, եթե հնարավոր է, ինչպես նաեւ թռուցիկների միջոցով ծավալել լայն պրոպագանդա ընդդեմ պատերազմի՝ հիմնական խնդիր դարձնելով:

1. Թուրքիան այլեւս նախկին Թուրքիան չէ եւ Գայաստանի նկատմամբ ագրեսիվ նպատակներ չունի:

2. Քեմալական Թուրքիան խորհրդային Ռուսաստանի դաշնակիցն է եւ պայքարում է իր ազգային ազատության համար ընդդեմ իմպերիալիզմի (Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի):

3. Գայաստանի կոմունիստների հաղթանակը Թուրքիայի վրա կնշանակի իմպերիալիզմի ուժեղացումը Սերժանտի Արեւելքում եւ դրանով իսկ կվտանգի հեղափոխության հաղթանակը Անդրկովկասում, ապա նաեւ Արեւելքի խորհրդայնացումը:

4. Գայաստանի կոմունիստների խնդիրը պետք է լինի արագացնել Գայաստանի Գայաստանի պարտությունը, որով եւ կարագացվի Գայաստանի խորհրդայնացումը:

Այս նպատակի համար պետք է. 1. Կազմալուծել հայկական կոլոզ բա-

նակը բոլոր միջոցներով, այն է՝ ա) կազմակերպել դասալքություն եւ ամեն կերպ խանգարել զորահավաքին, բ) ռազմաճակատներում հասկացնել զինվորներին, որպեսզի նրանք չկրակեն առաջացող թուրքական զորքի վրա, այլ, լքելով դիրքերը, վերադառնան թիկունք, գ) չենթարկվել սպաների հրամաններին եւ հարկ եղած դեպքում ոչնչացնել նրանց:

2. Այս ամենի հետ ամենաակազմալքող հասկացնել հանրապետական Գայաստանի զինվորներին, որ հաղթող թուրքական ասլյարը հեղափոխական ասլյար է, որը ոչ միայն իրեն թույլ չի տա որեւէ գործողություն պարտված երկրի վերաբերյալ, այլեւ կօժանդակի աշխատավոր հայ ժողովրդին՝ ազատվելու իմպերիալիստական գործակալ դաշնակցականների տիրապետությունից: Նորից ու նորից բացատրել, որ դաշնակցների տիրապետությունից ազատվելով՝ Գայաստանը ընդմիջտ կկապվի խորհրդային Ռուսաստանի հետ, ընդմիջտ վերջ կտրվի պատերազմին եւ սովին, ու մշտական ընդհարումներից քայքայված երկիրը կլիսանա Ռուսաստանի հացով եւ մասնակիցը կդառնա համաշխարհային հեղափոխության մեծ գործին:

Ծանոթություն. Գրությունը կարդալ սահմանափակ ժողովում եւ կարդալուց հետո անմիջապես այրել: Գայաստանի կոմ. [ուղիստական] կուսի [կուսակցության] կենտրոնական կոմիտեի անդամներ՝ Ա. Կայան, Ա. Մռավյան, Ա. Նուրիջանյան, Շ. Ամիրխանյան, Ի. Դովլաթյան, Ա. Գյուլստանյան» (ԶԱՄ, ֆ. 1022, ց. 3, գ. 275, թ. 1):

Սա իսկը եւ իսկը բոլշևիկյան փաստաթուղթ է՝ ազգային հիշողություն ու ոգի ունեցող բոլոր ուժերի համատարած ջարդով, որի անձեռք տարածվեց ամբողջ 1920-1930-ական թվականների վրա, երբ ամեն մի հայրենասիրական մտայնություն որակվում էր մացոխակով եւ վերածվում քաղաքական հաշվեհարդարի: Այս փաստաթուղթը պետք է հասցնել Կարսի անկմանը, Նախիջեւանի եւ Արցախի օտարմանը խորհրդային Գայաստանի քարտեզից, Գայաստանի եւ մյուսների կացմահարությանը թուրք մսագործի ձեռքով, ազգային բանակից վերադարձող հայ սպաների աքսորին ու կոտորածին, Մյասնիկյանի դեմ կազմակերպված ինքնաթիռային վթարին, Խանջյանի սպանությանը, 1937-ի արյունոտ նախնիին, Զարենցի մահվան մղձավանջին, Ներսիս Ստեփանյանի, Բակուցի, Մահարուշատ եւ շատերի գնդակահարությանն ու մյուսների աքսորին:

Ահա իրավիճակը ներկայացնող այլ փաստեր. «Լույսը դեռ չէր բացվել, ճիշտ նշված ժամին ռազմաճակատի ամբողջ երկայնքի վրա սկսվեց ընդհանուր հարձակումը: Որոտացին թնդանոթները: Գեղից ու մոտից լսվեցին հրացանի համազարկերի եւ զնդացիների տրաքտրաքոցը: Ուռա՛, կեցցե՛...»

Թշնամին հանկարծակիի եկած սկսեց ետ քաշվել: Լույս էր արդեն: Օդում երեւացին մեր զույգ սավառակները, որոնք հավի ձագեր որոնող ուրուրների պես բարձունքից հետախուզում էին թշնամուն:

Թվում էր, թե ամեն ինչ անցնում է՝ առանց խոչընդոտի, ըստ ծրագրի, ինչպես ասում են: <...> Մեկ էլ ի՞նչ սահմանափակ թեւում: Ինչ-որ անորոշ աղմուկ, հեռվից հետզհետե մոտեցող համազարկեր: Ծակատի հրամանատարի դեմքին ջրային անհանգստություն: Ի՞նչ է պատահել: <...>:

Գիշում եմ միայն հրամանատարի խնդրով ծայրը, որ աշխատում էր կեցցել սարսափահար փախչող զինվորներին, որոնց ալիքը ինձ էլ քշեց տարավ հետը...

Երեկոյան, երբ հոգնած ու ջարդված հավաքվել էինք բժ. Գազանջյանի տանը, հայտնի եղավ, որ մեր զորքի առաջխաղացման ընթացքում, ձախ թելի թշնամու կողմից



Լսվել են հայերեն ձայներ. «Ընկերներ, մի կռվեք մեր դեմ. մենք ձեր ընկերներն ենք... Անկցի՛ դաշնակցների իշխանությունը»:

Բոլշևիկյան բացականչություններ լսվել են եւ մեր զինվորների մեջ, որոնք առաջ են բերել իրարանցում: Թշնամին կենտրոնացրել է կրակը այդ թելի վրա, որտեղից սկսվել է փախուստը: Չախ թելի փլուզումը անդրադարձել է եւ ճակատի մյուս մասերի վրա» (Ս. Կրացյան, «Կյանքի ուղիներով: Դեմքեր, դեպքեր, ապրումներ», Բեյրութ, հ. Բ., 1960, էջ 250):

Ճակատային հայ զինվորի բարոյալքմանը չհիմնադրված 30-ամյա գնդապետ Գյուլստանյան Տիգրանի Մազմանյանը (1890-1920) դասալիք խուժանի վերածվող զորքի առաջ ինքնասպանություն է գործում:

Կարսի անկմանն ու գնդապետ Գյուլստանյանի ինքնասպանությանն է նվիրված Նաիրի Զարյանի «Գնդապետ Մազմանյան» բանաստեղծությունը (Ռազմիկ շաբաթաթերթ, 1920, թիվ 28, 22 նոյեմբեր, 49 տող; արտատպվել է՝ «Վեմ», ամսագիր, Փարիզ, 1936, ԺԳ, հունվար- փետրվար): Սկիզբը.

Այս պատմությունը ամոթակեց բերնեբերան է գալարվում եվ ինչպես օձ բյուրաժանիք հոգիներն է մեր խայթում: Նրանք եկան խոնավեցան մեր անառիկ դիրքերի տակ, Ոռնում էին դիրքերն ի [տակված է իր] վեր գերթ գայլերի սոված ոհմակ. Գնդապետը մեր քառալից մշամ տվեց վերջին կռվի, Ինչպես մի հոտ հեզ ոչխարի մերիները կարկամեցին: Սովալուկ գայլերի պես նրանք սողում էին դեպի մեզ, Գնդապետը երեք անգամ աղաղակեց կռվի մշամ. Երեք անգամ «յառաջ» ձայնեց ու սլացավ սուսերամերկ, Երեք անգամ դիրքերն ի վեր նա պաղատեց կռվի հրավեր... Թերթի հաջորդ համարում (թիվ 29, 29 նոյեմբեր) «Մեր կողոտսները» խորագրի ներքո հարդարվում է, որ Կարսի վերջնական անկումից երեք օր առաջ՝ հոկտեմբերի 27-ին, գնդապետ Գյուլստանյանը ինքնասպանություն է գործել՝ «չկարողանալով տանել պարտության անարգանքը»:

Գեղապետը 11. IX. 1929-ին, եւ հետո Զարյանն այդ բանաստեղծությունը ուրացել է: ԳԱԹ, ԶՖ-ում (թիվ 298) պահվում է Կարսի հասարակայնության մի խմբակար: Այդ օրերի իրական վիճակը. «Երկրի ներքին պատկերը մռայլ էր: Գյուլստանյանյան սահմանները մշտական սպառնալիքի տակ էին բոլշևիկներից եւ պահանջում էին զինվորական աշխուրջը հսկողություն: Արտաքին հարաբերությունները գրեթե խզված էին: Ժողովրդական տնտեսությունը քայքայված, արտաքին բոլոր դիմումները մնացել էին անհետեւանք» (Ս. Կրացյան, «Կյանքի ուղիներով: Դեմքեր, դեպքեր, ապրումներ», Բեյրութ, հ. Բ., 1960, էջ 256):

Զարենցը Կարսի անկումից հետո. «Եղիշեն տխուր էր ու մտացրիվ, լաց էր լինում, երբ խոսում էր Կարսի մասին եւ ժողովրդի թշվառ վիճակի մասին: Սկսել էր

խմել: Գրականում օդու շիշ էր պահում» (Էլեն Բյուզանդ, «Նաիրի» շաբաթաթերթ, Բեյրութ, 1955, 10 հունիս):

1920, 7 նոյեմբեր – Կարաբեքիրը մտնում է Ալեքսանդրապոլ, գրավում քաղաքը: Գայական կողմի դիմադրությունը թույլ էր: Ներկայացվում է կողոպտիչ կործանարար վերջնագիր, ըստ որի՝ հայկական կողմը թուրքերին պետք է հանձնել զինամթերքի հսկայական քանակ, երկու շոգեշարժ, 50 վագոն, իսկ գյուղերը կողոպտվում են ու թալանվում տանում են հացահատիկի պաշարները, խոշոր ու մանր եղջրավոր անասուն, գյուղատնտեսական գործիքներ:

Գայ բոլշևիկները, ինչպես Կարսում, այնպես եւ Ալեքսանդրապոլում, ազգային դավաճանի դեր են ստանձնում: Նոյեմբերի 13-ին կազմակերպվում է ՌԿ(Բ)Կ Ալեքսանդրապոլի կոմիտեի հանրահավաք եւ ընդունվում ինքնասպանության համարժեք բանաձեւ. «Ալեքսանդրապոլի պրոլետարիատը եւ չքավոր գյուղացիությունը, ազատագրվելով հայկական դարավոր լծից, հողում է իր եղբայրական սրտագին ողջույնը թուրքական կոմունիստական կուսակցությանը՝ Թուրքիայի ճնշված մասսաների միակ պաշտպանին: Գայաստանի հարստահարված եւ բազմատանց զանգվածները վստահ են, որ միայն Գայաստանի եւ Թուրքիայի երկու հարեւան ժողովուրդների պրոլետարիատի միավորումը եւ ձեռք ձեռքի տված համատեղ աշխատանքը կերաշխավորի մեծ հաղթանակի լիակատար հաջողությունը եւ վերջնական տապալումը ազահ համաշխարհային իմպերիալիզմի: <...>: Կեցցե՛ Թուրքիայի կոմկուսը: Կեցցե՛ Արեւելքի կարմիր հեղափոխական բանակը» (ԶԱՄ, ֆ. 1022, ց. 2, գ. 189, թ. 1):

Ամեն ինչ ուղղվում է Գայաստանի գործող ղեկավարություն դեմ. «Խմբապետներից կազմված խայտառակ դաշնակցականների կառավարության գործը նահանջում է Քեմալի ահեղ ճնշման առաջ: Բավական չէ, որ նրանք թալանի ճարակ դարձրին ժողովրդի հարստությունը, բավական չէ, որ նրանք դժբախտ դարձրին հայ աշխատավոր զանգվածներին, այժմ էլ նրանք խաբուս են ձեզ, գյուղացիներ եւ զինվորներ, ասելով, թե թուրքերը գալիս են թալանելու եւ մորթելու ձեզ: Մենք կոչ ենք անում ձեզ չհավատալ դաշնակցներին, քանի որ գալիս են ոչ թե կողոպտիչներ, այլ հայ գյուղացիների, զինվորների եւ բանվորների ընկերները: Նրանք գալիս են ոչ թե մորթելու ձեզ, այլ ազատելու դաշնակ թալանչիների ձեռքից (նույն տեղում, թ. 2): Ստորագրել են հանրահավաքի նախագահ Սաթուր Տեր-Գրիգորյանը (Արծվիկ), բարտուղար Սկրտիչ Խաչիկյանը, Նուշիկ Զավարյանը եւ, որքան էլ անհավատալի է, Ներսիս Ստեփանյանը:

Թուրքերն Ալեքսանդրապոլից ու գավառից հեռացան 1921 թ. ապրիլի 22-ին՝ թողնելով 30.000 սպանված, 32.000 սովահարված, տանելով 26.000 գեղի, 240.000 խոշոր եղջրավոր անասուն («Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն», Ժողովածու, Գյումրի, 2020, էջ 231-232): Այս տվյալներն ավելի զարհուրելի են Բաքվում Գայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ի. Դովաթյանին ԳԱՄԳ արտաքին գործերի ժողովում Ա. Մռավյանի 1921 թ. մայիսի 29-ին հասցեագրած հեռագրում: Ըստ այդմ կես տարվա ընթացքում թուրքերի վայրագությունը ներկայացնում է այսպիսի պատկեր. Արբուլաղի եւ Զաջուռի շրջաններում հայտնաբերվել է 12.050 դիակ, որի 80 տոկոսը 5-12 տարեկան երեխաներ, մորթվել են 60.000, վիրավորվել՝ 38.000 տարբեր տեղի ու տարիքի հայեր, գերեզմարվել է 18.000 երիտասարդ, բռնաբարվել 50.000 կին ու աղջիկ [տես՝ ԶԱՄ, ֆ. 4010 (Մռավյանի ֆ.) ց. 1, գ. 29, թ. 1]:

չարունակությունը՝ էջ 7





# Եղիշե Չարենցի կյանքն ու ժամանակը. 1920 թվական

## սկզբը՝ էջ 6

**1920, նոյեմբեր** – «Հայաստանի կոուպե-րացիա» (թիվ 20-21) երկշաբաթաթերթում տպագրվում է Դավիթ Անանուհի «Կարսի անկումը» հոդվածը. «Թող լռե հայի մեջ մռայլ ինքնաձուլման արհեստը: Թող բուր խոնարհության փոխարեն նրա մեջ ծառս լինի պայծառ ընթրստացումը: Թող գերագույն զեղեցկություն համարվի մահը հանուրի առաջ եւ համուրի բարոյություն համար, եւ մենք կհաղթենք»: Նույն է, ինչ Չարենցի «Մահվան տեսիլ»-ում. «Թող ոչ մի գոհ չպահանջվի ինձնից բացի»:

**1920, 30 նոյեմբեր** – Հայաստանի Յեղ-կոնը «Բոլորին, բոլորին, բոլորին» կոչով Հայաստանը հայտարարում է խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն: Յեղ-կոնի նախագահ՝ Կասյան, անդամներ՝ Ավիս, Բեկզադյան, Դավթյան, Մռավյան, Տեր-Գաբրիելյան:

**1920, 2 դեկտեմբեր** – Հայաստանում հաստատվում է խորհրդային իշխանություն: Նոյեմբերի 29-ը կարմիրների մուտքն է Քար-վանասարա եւ խորհրդային իշխանության ընդհանուր հռչակումը: Իշխանափոխությունը խաղաղ անցումով տեղի է ունենում դեկտեմբերի 2-ին:

**1920, 5 դեկտեմբեր** – Լույս է տեսնում խորհրդային Հայաստանի պաշտոնաթերթ «Կոմունիստ» օրաթերթի առաջին համարը. խմբագիր Աշոտ Հովհաննիսյանը աշխատակցելու է հրավիրում Չարենցին: 1921 թ. մայիսից վերանվանվում է «խորհրդային Հայաստան»:

**1920, 6 դեկտեմբեր** – Յեղկոնի հրամա-նագրով խորհրդային Հայաստանի սահ-մաններում հայերենը հռչակվում է պետա-կան լեզու, մուսուլմանական ազգաբնակ-չության շրջանում հայերենի հետ մեկտեղ՝ նաեւ թուրքերենը:

**1920, 15 դեկտեմբեր** – Չարենցը մշա-նակվում է ՀԽՍՀ լուսավորության ժողովր-դական կո-միսարիատի արվեստի բաժնի վարիչ եւ կուլեգիայի անդամ: Նշանակման հրամանն ստորագրել է լուսժողովոմ Աշոտ Հովհաննիսյանը: Այդ պաշտոնում մնում է մինչեւ 1921-ի հունիսը: 1923 թ. օգոստոսի 11-ի հարցաթերթիկում նշում է հուլիս ամիսը (ԳՄ, էջ 287):

Դեկտեմբերի 23-ին Չարենցի ստորագ-րությամբ գրանցվում է առաջին գրությունը (տես՝ ԳՄ, էջ 195):

Հատկազգած աշխատասենյակը նաեւ նրա բնակարանն էր, այդտեղ էլ քնում էր: Նրա անունը ծայրաստիճան կարիքավոր 9 աշխատակիցների շարքում էր, որոնց հա-մար 1921 թ. փետրվարի 2-ին միջնորդագիր է լրացվում՝ թույլատրել օգտվելու էժանա-գին ճաշարանից (ըստ Ալ. Չաբարյանի՝ Լու-սավորության ժողովրդական կոմիսարիատի արվեստի բաժնի վարիչ նշանակվել է դեկ-տեմբերի 2-ին, տես՝ «Հուշեր եղիշե Չարեն-ցի մասին» գրքի առաջաբանը, 1986, էջ 18):

Չորյանը հիշում է, որ այդ պաշտոնն ստանալուց առաջ կարճ ժամանակով եղել է «օրաթերթի քարտուղար», իսկ պաշտոնի անցնելուց մի քանի օր անց հրավիրել խորհրդակցություն, որին մասնակցել են Տերտերյանը, Դեմիրճյանը, Չորյանը. խոսել է կազմակերպական խնդիրների մասին եւ խնդրել նրանց աջակցությունը:

Որպես պաշտոնյա՝ գրել է ստորագրել է բազմաթիվ գրություններ, որոնք հիմնակա-նում վերաբերում են երաժշտական գործիք-ներ բռնագրավելուն եւ հատկացնելուն «մի-միայն միություններին եւ հիմնարկություն-ներին» (ԳՄ, էջ 249):

Վարձատրվել է որպես արվեստի բաժնի վարիչ եւ կուլեգիայի անդամ: Ստացել է նա-եւ հացի փոխարեն տրվելիք գումարը (ԳՄ, էջ 274-277):

**1920, 15 դեկտեմբեր** – Թիֆլիսում լույս է տեսնում Վրաստանի հեղափոխական կո-միտեի օրգան «Կարմիր աստղ» օրաթերթի 1-ին համարը, 25. II. 1923-1927-ին՝ Կ(Բ)Կ Կենտրոնի օրգան «Մարտակոչ» (հիմնադիր



խմբագիր՝ Ա. Մյասնիկյան, խմբագրական խորհուրդ՝ Ս. Խանյան, Ս. Երզնկյան, Գ. Սուրիաթյան, Ա. Խունարյան), 1927-1938-ին՝ «Պրոլետար», 1938-1990-ին՝ ԿԿԿ Կենտ-րոնի օրգան «Սովետական Վրաստան», 1991-ից՝ անկախ պարբերական «Վրաս-տան»: «Կարմիր աստղ»-ը (թիվ 5) թարգմա-նաբար տպագրում է Սամբրիտիկի «Կոչ» բանաստեղծությունը (թարգմանչի անունը նշված չէ), որի մեջ զգալի են չարենցյան ազդակներ.

Օվկիանի նման, է՛յ, անծայրածիր հուզ-ված ամբողջներ, ես ձեզ եմ կանչում այս ահեղ մարտի վճ-ռական ժամին...

**1920, 16 դեկտեմբեր** – Նախկին կրթու-թյան մինիստրության արվեստի բաժնի վա-րիչ Դեմիրճյանը ներկայացնում է գեկուցա-գիր. «Հանրային կրթության եւ արվեստի ընկ. կոմիսարիոն գեկուցում արվեստի բաժ-նի վարիչի», որի վրա Չարենցը մակագրել է «Կցել» (ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 679, թ. 59-60 հակ., ինքնագիր):

**1920, 17 դեկտեմբեր** – Յեղկոնի հրա-մանագրով մշակութային-լուսավորչական բոլոր հաստատությունները ազգայնացվում են եւ վերակազմավորվում: «Հոգեւոր հաս-տատություններին պատկանող կուլտուրա-կան հիմնարկությունների պետականաց-ման մասին» հրամանագրով լուսժողովոմա-տի տնօրինությանն են անցնում նաեւ հո-գեւոր կառույցները:

**1920, 17 դեկտեմբեր** – Լուսժողովոմ Ա. Հովհաննիսյանը հրաման է ստորագրում Երեւանի համալսարանի վերակազմավոր-ման մասին: Դեկտեմբերի 28-ի մեկ այլ հրա-մանով կազմավորվում է Երեւանի ժողովր-դական համալսարանը: Հասարակագիտա-կան առարկաների բաժանմունքում դասա-վանդում են Աբեղյանը, Տերտերյանը, Դա-վանցյանը, Լիսիցյանը, Մանանդյանը, Էդի-լյանը, Թորամանյանը, Չուբարյանը եւ ուրիշ-ներ:

**1920, 22 դեկտեմբեր** – Արտաքին գոր-ծերի ժողովոմ Ա. Բեկզադյանի գրությու-նը լուսժողովոմ Ա. Հովհաննիսյանին. «Ուղարկ-վում է Ձեր տրամադրության տակ համա-պատասխան պաշտոնի համար մեր կոմի-սարիատի նախկին ինֆ. [որմացիայի] բաժ-նի վարիչի օգնական տիկ. Արմենուհի Տիգ-րանյանը» (ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 17, թ. 4): Ար-մենուհու մասին մտահոգվողը եւ այս ու հա-մանման գրություններ կազմակերպողը Չա-րենցն էր: Լուսժողովոմատում Ա. Տիգրանյա-նը նշանակվում է հրատարակչական բաժնի քարտուղար:

Չարենցն այդ շա՛տ վտազավոր ժամա-նակներում ամեն ինչ անում է՝ ձեռք մեկնե-լու Արմենուհի Տիգրանյանին: Պահպանվել է լուսավորության ժողովրդական կոմիսա-րիատի աշխատակիցների 1920 թ. դեկտեմ-բեր ամսվա եւ հաջորդ տարվա մի քանի ամիսների ռոժիկացուցակը. 5-րդը արվես-տի բաժնի վարիչ Չարենցն է, ռոժիկի չափը՝ 8250 ռ., ստացած ավանս՝ 5000 ռ., ստանա-լիք գումար՝ 3250 ռ.ե (ԳՄ, էջ 274-277; ՀԱԱ,

ֆ. 122, ց. 1, գ. 680, թ. 39-40): Քիչ ներքե-նաեւ Արմենուհի Տիգրանյանի անունն է, ով հրատարակչական բաժնի քարտուղարի պաշտոնով աշխատանքի է ընդունվել դեկ-տեմբերի 20-ին:

**1920, 23 դեկտեմբեր** – Որպես արվես-տի բաժնի վարիչ՝ միջնորդագիր է հղում Արարատյան մահանգի Յեղկոնի նախագա-հին զբաղեցրած բնակարանից չվտարելու «գրականագիտուհի» Պերճուհի Բարսեղյա-նին ու նրա ընտանիքը եւ «անօգնական տիկնոջը չմատնելու «անելանելի կացու-թյան»:

**1920, 24 դեկտեմբեր** – Հովհաննես Թու-մանյանի գրությունը «Հայաստանի Ռեկո-միին». «Հայաստանի Ռեկոմիին քաջ հայտնի է, թե ինչ ծանր նյութական վիճակի մեջ է եղել միշտ հայ գրականությունը եւ թե ինչ-քան ավելի ծանրացել է վերջին տարիները: Գրողներից ոմանք ստիպված են ծախս-լու իրենց ունեցած իրերն ու գրադարանը նրանով ապրելու, բայց կան մարդիկ, որոնք ծախսելու էլ ոչինչ չունեն:

Սրանով խնդրում են Ռեկոմիին խորի-դային Ռուսաստանի օրինակով, որ էնքան ուշադիր է դեպի գրականությունը, պաշտ-պանություն ցույց տալ հայ գրողներին եւ դժար ժամանակներում:

Նախագահ հայ գրողների ընկերության՝ Հովհաննես Թումանյան» (ԵԼԺ, X, 1999, էջ 370-371):

**1920, 27 դեկտեմբեր** – Որպես արվեստի բաժնի վարիչ՝ միջնորդագիր է հղում Երեւա-նի գավառական Յեղկոմ Վահան Շահգյալը-յանին նախատեսվող ժողովրդական պատ-կերասրահի համար ուղարկել «գավառա-կան հեղկոմից վերցրած արձանը»:

**1920, 27 դեկտեմբեր** – Որպես արվես-տի բաժնի վարիչ՝ վկայական է տալիս քա-ղաքացի Իոսիֆ Մելիք-Աղամալյանին՝ ըստ որի՝ «Լուսժողովոմատի արվեստի բաժնի կողմից նրանից հաշվառում է վերցված հնագույն զենքերի հավաքածու...»: Հավա-քածուի մեջ կար նաեւ պատմագեղարվես-տական արժեք ներկայացնող Դամասկոսի պողպատից ոսկեմախչ թուրքական մի իրն թուր: Հաջորդ օրը այդ կապակցությամբ առաջացած խնդիրների մասին տեղեկաց-նում է Երեւանի կայազորի պետին, իսկ դեկ-տեմբերի 30-ին նրան հասցեագրված գրու-թյամբ պահանջում է «...որոնելու մատ-նանշված թուրը, որ պետության սեփակա-նություն է»:

**1920, 30 դեկտեմբեր** – «Կոմունիստ»-ը (թիվ 21) տեղեկացնում է. «Լուսավորության ժողովրդական կոմիսարիատին կից հիմն-վում է ժողովրդական լուսավորության կուլե-գիա, որ գործելու է որպես խորհրդակցա-կան օրգան լուսավորության ժողովրդական կոմիսարիատի նախագահությանը: Կուլեգի-այի անդամ են նշանակվում ընկ. ընկ. Դուր-գարյան, Քեչեկեզյան, Հովսեփյան, Ավետիս-յան եւ Չարենց»:

**1920, 30 դեկտեմբեր** – Որպես արվես-տի բաժնի վարիչ՝ գրություն է հասցեագրում խմբավարական դասընթացների ղեկավար

Ս. Բարխուդարյանին, ըստ որի՝ առաջիկա տարվա սկզբից դասընթացները միացվելու են կոնսերվատորիային, եւ պահանջում ամ-բողջ գույքն ու գործերը հանձնել գավառա-կան Յեղկոմին:

**1920, 30 դեկտեմբեր** – Որպես արվես-տի բաժնի վարիչ՝ գրությամբ տեղեկացնում է Երեւանի դրամատիկական ստուդիայի դե-կավար Վարդան Միրզոյանին, ըստ որի՝ հունվարի 1-ից ստուդիան պետականաց-վում է եւ պահանջում ամբողջ գույքն ու գոր-ծերը հանձնել գավառական Յեղկոմին:

**1920, 31 դեկտեմբեր** – Լուսժողովոմ Աշ-ոտ Հովհաննիսյանի հրամանով հանրապե-տությունում հաշվառվում եւ բռնագրավ-վում են երաժշտական գործիքները:

**1920, 31 դեկտեմբեր** – Նոր տարին նշում է Արփեմիկի եւ իրենց մտերին, ման-կատների դաստիարակ Արշալույս Ջանիկ-յանի հետ:

Վերջինս հիշում է. «1920 թ. դեկտեմբերի 31-ին Նոր տարին դիմավորեցինք Չարենցի հետ: Նա մեզ բարեմաղթեց լավ հասկանալ ժամանակի, իրերի դրությունը <...>: Հետո մտախոհ, թախիծով հիշեց հորը՝ Աբգար աղային, եւ մորը.

- Կայրս հիմա կբարձրացնի բաժակը եւ կասի - տեսնես ի՞նչ է անում մեր մոլորված որդին՝ Եղիշեն [հայրը մահացել էր]:

- Այդ Նոր տարվա գիշերը Չարենցը մեզ կարդաց մորը նվիրված գազելը» («Հուշեր Եղիշե Չարենցի մասին», 1986, էջ 113-114):

**1920** – Երեւանում գրում է «Երգ ժողովր-դի մասին» պոեմը: Երրորդ գլուխը՝ «Հատ-ված պոեմից (ժողովրդի համար)», տպագր-վել է «Կցեց մայիսի մեկը» մեկօրյա թեր-թում, ամբողջությամբ՝ «Երկերի ժողովա-ծու»-ի II հատորում (1922):

**1920** – «Երբվանի՞ց եք արհմիության անդամ. 1920 թվականից» (ԳՄ, էջ 288):

**1920** – «Ավագ վարպետին՝ աշակերտից եւ հարգողից» ընծայագրով եւ «920, 14, Երեւան» թվատեղագրությամբ «Ծիածանը» նվիրել է Հովհաննես Հովհաննիսյանին:

**1920** – Իրեն տեսնում էր որպես հայու-թյան ու հայկականության բանաստեղծ: Սանահինի կայարանում, գերանների վրա նստած, Միքայել Մազմանյանին ասել է. «Ես հիմա ամեն տեսակի բան պետք է գրեմ, որ ամեն մարդ այնտեղ հոգեւոր սնունդ գտնի իր համար» («Հիշողություններ Եղիշե Չա-րենցի մասին», 1961, էջ 86):

**1920** – Խորեն Լորենցի թարգմանու-թյամբ Մոսկվայում տպագրվում է Ա. Բոգդա-նովի «Գեղարվեստը եւ բանվոր դասակար-գը» գիրքը, որի մեջ հավելվածի կարգով եւ էջերի նոր համարակալումով գետեղված է նաեւ Ա. Կարինյանի «Հին եւ «նոր» գե-ղարվեստը» հոդվածը:

Ըստ Բոգդանովի՝ «Պրոլետարական պո-եզիայի բնույթը որոշվում է հենց իր՝ բանվոր դասակարգի կենսական հիմնական պայ-մաններով – նրա վիճակով արտադրության մեջ, նրա կազմակերպության տիպով, նրա պատմական բախտով»: Խոսում է այդ պոե-զիայի ոչ թե ու չափի մասին, բնութագրում առանձնահատկությունները: Քննադատու-թյանը վերապահում է «գեղարվեստի կյան-քը կարգավորողի» դերը:

Կարինյանն իրենն է պնդում, ըստ որի՝ «մեր օրերում եւս չի կարող ստեղծվել կա-տարելապես հստակ եւ անաղարտ պրոլե-տարական գեղարվեստ: Այսպես թե այնպես նա գրեթե աննշան չափով կապված կլինի անցյալի հետ: Ապագա գեղարվեստը կս-տեղծվի հետագայում»:

Կարինյանը քննադատում է Բոգդանո-վին ամեն ինչ ի նոր սկսելու հարցում:

Նաեւ խմբավորում է ռուսական պոեզի-ան՝ սիմվոլիզմ, ֆուտուրիզմ, գյուղացիա-կան պոեզիա, պրոլետարական պոեզիա: Որպես վերջինի սկիզբ՝ առանձնացնում է Գորկու առաջաբանով 1914-ին Պետերբուր-գում լույս տեսած «Պրոլետարական բա-նաստեղծների առաջին ժողովածու» գիրքը:



# Եղիշե Չարենցի կյանքն ու ժամանակը. 1920 թվական

սկիզբը՝ էջ 7

Կարինյանը պաշտպանում է անցյալի մշակութային ժառանգությունը նոր պայմաններում ոչ թե մերժելու, այլ պահպանելու և զարգացնելու տեսակետը: Նույն թվականին լույս է տեսնում առանձին գրքով:

**1920** – Չարենցի ինքնագրով նրա անձնական գրադարանում առկա է Դեմիրճյանի «Գարուն» (Թիֆլիս, 1920) քառյակների ժողովածուն:

**1920, ամառ-1921, փետրվար** – Երեւանում սկսում, Մոսկվայում շարունակում եւ ավարտում է «Տաղարան» շարքը՝ Սայաթ-Նովայով ներծծված գրական-երաժշտական մթնոլորտի ամփոփական արգասիք, որ թունանայանի, Բաշինջաղյանի, Գրիշաշվիլի նախաձեռնությամբ տիրում էր Թիֆլիսում՝ իր մեջ առնելով ոչ միայն հայ, այլև վրաց ու այլազգի մտավոր շրջանակները:

Թիֆլիսյան միջավայրի տեսադաշտում սիրուց մերժված դարդիման ու տխուր, բայց կենսուրախ մի երանգ կա ամբողջ շարքի մեջ, որ ավարտվում է հայրենիքի վեհացունով՝ «Ես իմ անուշ...»-ով:

Շարքը նվիրված է Արփենիկին՝ որպես սիրո մի նոր տեսիլք, նոր կյանքի ներշնչանք, խորքում անցյալին հառած աչքերի արցունքն ու մղկտոցն է:

Շարքը ունի Սայաթ-Նովայի «Ի՞նչ կոնիմ հեքիմը...» խաղից բնաբան, առաջին երկու քառյակներից բացի ընդգրկում է 20 տաղ: Առաջին անգամ ամբողջությամբ տպագրվել է Եժ, I հատորում (1922):

Ինքը՝ Բանաստեղծը, իբրև գործող հերոս, հանդես է գալիս Տաղասացի կերպարով՝ որպես նորոյր մի Սայաթ-Նովա: Սայաթ-Նովայով տարվածությունն աննկատ ուղեկցել է նրան հետագա տարիներին. «Չարենցիի գարնանը է Սայաթ-Նովան, ամեն օր կարող ես նրա խաղերը կարդալ եւ ամեն օր մի նոր բան գտնել, կարծես երեկ չէիր կարդացել: Թունանյանը ծիշտ է ասել <...>, որ բավական է Սայաթ-Նովային մի անգամ կարդաս, էլ չես կարող ազատվել: Տեսնես՝ կարող եմք Սայաթ-Նովայի պես բանաստեղծություններ գրել: Մենք նստում ենք, ծրագրում, օրենքներ գործածում, իսկ նրանք՝ հենց ինքը գալիս է շերամի հասուն որդի թելի նման: <...>: Սայաթ-Նովան անտակ ծով է, ծով, նա հո մեզ նման չի նստել, թե՛ բանաստեղծություն եմ գրում, նրանք հենց գրվել է» («Չարենցիի հետ: Գուշեր», 1997, էջ 93):

Սայաթ-Նովային անդարադարձն ունի ավանդույթ, որ գալիս է ռյազանցի բանաստեղծ Յակով Պետրովիչ Պոլոնսկուց (1819-1898): Նրան հիշում է Բյուրուսովը «Չարենցիի պոեզիան» գրքի առաջաբանում (1967, էջ 33): Պոլոնսկին 1846-1851 թթ. գինվորական ծառայությունն անցկացնելով Թիֆլիսում՝ ծանոթանում է Գեորգ Ախվերդյանի հետ, նրա միջոցով թափանցում Սայաթ-Նովայի աշխարհը եւ մամուլում հանդես գալիս թե՛ Սայաթ-Նովային նվիրված բանաստեղծություններով եւ թե՛ նրան նվիրված հոդվածներով (տես՝ «Кавказ», 1851, թիվ 1, 2): Ավելորդ չէ հիշել, որ նրա ոգեւորության աղբյուրը թիֆլիսցի հայագրագի գեղեցկուհի Սոֆյա Գուլգազն էր:

«Տաղարան» շարքում շարունակվում է երգի դիցուհու կերպարամափոխությունը. նա ներկայանում է միջնադարյան արեւելյան գեղեցկուհու՝ Գոգալի կերպարանքով: Գոգալը ոչ Կապույտ աղջկին է, ոչ Բրոնզե ամազոնուհին, ոչ Գեղամի տիկինն է, ոչ Փողոցային պարուհին. նա անմատչելի ու անհասանելի «հաշիշով օծուն ու բալասամով» թավշյա գիշերների Առեղծվածն է, աչքերը՝ Արեւելքի գիշեր:

Նրա առաջնորդն ու ուղեկիցը Տերյանն էր, ում ներկայությունն առկա է նաեւ «Ես իմ անուշ...»-ում. Ահա Տերյանի «Դու հպարտ չես, իմ Գարունիք...» եղերերգը.

Չլազա խնդուն փառքիդ  
Անցյալ ու հին փայլով երբեք...  
Սիրեցի հեգ, անբեն հոգիդ,  
Եվ երգերդ մեղմ ու բեկեղուն...

Ջուզահեռը Չարենցի «Սիրում եմ մեր երկիրը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսե ...» եւ հաջորդող տողերի ոգու ընդհանրությունն է. այդ կապակցությամբ ասել է. «Արմատներս այդտեղ եմ: <...> [Տերյանը] Ելակետ է, բայց ճանապարհը պիտի ինքը անցնես...» (Ռ. Չարյան, «Չուշապատում», I, 1975, էջ 87; «Չիշողություններ Եղիշե Չարենցի մասին», 1961, էջ 364):

Չարենցի «Տաղարան»-ում գործողությունների կատարման տեղը Սայաթ-Նովայի Թիֆլիսն է, թաղը՝ հայոց Չավաբարը, անցումները զոգալ-սեր-մերժում-հուսահատություն-մոլորվածություն-ընկերական դարդիման միջավայր-հայրենիքի սերվերջանակն ակնհայտ հայրենիքին:

Այստեղ է «Ես իմ անուշ Չայաստանի արեւահամ բառն եմ սիրում» տաղը, ինչը, ըստ Ս. Սարյանի, «...բոլոր մասշտաբներից դուրս պաննո է: Պաննո՝ հասցված ժողովրդական էպոսի աստիճանին: Դա անհիշելի ժամանակներից եկող Չայաստան-Ուրարտու-Արմենիա երկրի համապարփակ պաննո-դիմանկարն է: <...>: Այդպիսի մի երկ աշխարհ բերելու համար պետք է ամենաքիչը կիսաստված լինել» («Չուշեր Եղիշե Չարենցի մասին», 1986, էջ 184):



Դրվագ՝ Եղիշե Չարենցի երեւանյան տուն-թանգարանից

Վ. Սարյանը «Ես իմ անուշ Չայաստանի...»-ն անգիր գիտեր. «գայն մինչեւ այսօր կնկատեմ մեր երկիրն, մեր հողին, մեր պատմության նվիրված ամեննե գեղեցիկ երգը, գովաբանական աղոթքը: «Չայր մեր-ին նմանվող աղոթք մը» («Չարենցիի հետ: Գուշեր», 1997, էջ 9):

Բարձր է գնահատել նաեւ Իսահակյանը. «Ինձ վրա մեծ տպավորություն թողեցին նրա «Դանթեական առասպելը» եւ «Տաղարանը», լիրիկական մի շարք բանաստեղծություններ, մանավանդ նրա հայրենասիրական բանաստեղծությունը՝ մեծ խորքով «Ես իմ անուշ Չայաստանին»: Ինձ համար, առանց չափազանցության, բոլորովին օբյեկտիվ կերպով կասեմ, որ հայ տառերով այդպիսի բանաստեղծություն չի գրված՝ հայրենասիրության տեսակետից: Դա եզակի, անմարմնաց բան է: Նույնիսկ կարելի է ասել, որ եվրոպական, համաշխարհային գրականության հայրենասիրական ժանրի բանաստեղծությունների մեջ այդպիսի թափով, այդպիսի ընդարձակ խորքով գրված բան՝ գոնե ես չեմ հիշում» (Եժ, V, 1977, էջ 125):

Ըստ Ս. Աղաբաբյանի «...ազգային տոն է ու ժողովրդական տոնախմբություն» («Եղիշե Չարենցի», I, 1973, էջ 204):

Միեւնույն ժամանակ գրված «Մահվան տեսիլ» ինքնագրի հերթերից հետո «Ես իմ անուշ Չայաստանի...»-ն մոնումենտալ ու վեհ, լայնատարած ու խոր, վեհացնող ու բարձրացնող օրհներգ է:

Ավանդույթը շարունակվում է. Ջ. տաղի սկիզբն իր ծալքերն ունի՝

Չարենց. «Մե ձեռնս արաղ է, մեկելը գինի, // Երկունս էլ քո անուշ կենացը, զոգալ»:

Նարեկացի. «Ընպանակը երկու յերկուսին ձեռին»:

Չովնաթան. «Մեկ ձեռնիդ գինոյ թաս, մեկ ձեռնիդ սմբուլ»:

Ալանդարյան. «Երկու ձեռնի երկու մոմ»:

Տերյան. «Երկու բաժակ տեսա»:

Խայյան. «В одной руке цветы, в другой бокал бессменный, // Пируй с возлюбленной, забывая о вселенной...»:

1920-1921 թթ. բանաստեղծական շարքերի կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ Չարենցի լեզվապատկերային կտրուկ փոփոխությունները, այստեղից՝ ոճային բազմազանությունը, ձեւերի հակադրությունը, հեղինակի կերպարի որքան բեւեռացվածությունը, նույնքան առանձին բեւեռների միասնական համադրվածությունը: Ամեն ինչ հակադրամասնության մեջ է:

Այս եւ մյուս շարքերում թանձրանում է առաջին իսկ բանաստեղծություններից ու պոեմներից նրան բնորոշ, այնուհետեւ մինչեւ վերջ նրան ուղեկցող գեղարվեստական մի յուրահատկություն, ինչը կարելի է բնորոշել որպես մակրոտեքստի միկրոտեքստայացում: Նրա գրեթե բոլոր մեծ ու փոքր ստեղծագործություններն ասես մեծ կյանքի շունչը կրող մի-մի ներկայացում լինեն

նի «Չայ գրականություն» (Երուսաղեմ, 1942, էջ 607-608) եւ Սուշեղ Իշխանի «Արդի հայ գրականություն. Գ. Գեղապաշտ շրջան» (Բեյրութ, 1975, էջ 403) դասագրքերում: Օշականը ավելացնում է. «Ինձի անձանք է թե ո՞ր լույս է տեսած առաջին անգամ այս քերթվածը: Ամերիկայի «Չայրենիքին» մեջ անոր երեսալը կարծանագրեմ հոս»:

Չարցի քննությունը տես՝ Է. Ջրբաշյան, Տասնվեց տող (Եղիշե Չարենցի «Ես իմ անուշ Չայաստանի արեւահամ բառն եմ սիրում» բանաստեղծությունը).- «Չորս գագաթ», Երեւան, 1982, էջ 411-464; տես նաեւ՝ նույնի առանձին հրատարակությունը, Երեւան, 2003; Նորից Չարենցի բանաստեղծության մասին; Պետք է հասկանալ պոեզիայի լեզուն.- «Փաստերի հետքերով: Գրականագետի նոթեր», 2001, էջ 152-162:

«...բարն եմ սիրում» սխալ հանգեղով տպագրվել է Սիմոն Չակոբյանի «Կարմիր արեւ: Չինգեթորդ տարի» քրեստոմատիայում (1927, թերի էջերով պահպանվել է բանաստեղծի գրադարանում). «Մենք կարծում ենք, որ նա ընդամենն գիտակցաբար է մտցրել այդ ուղղումը՝ ցանկանալով թուլացնել եւ իր, եւ բանաստեղծի դեմ հնարավոր հարձակումների ուժքը (Է. Ջրբաշյան, Նորից Չարենցի բանաստեղծության մասին.- «Փաստերի հետքերով: Գրականագետի նոթեր», 2001, էջ 155):

Չետագայում այս սխալ հրատարակությունը անխոհեմաբար ներմուծվել է Չարենցի Եժ-ի I հատորում (1962, էջ 246): Չարցի քննությունը տես նաեւ՝ Գ. Գասպարյան, Երկու տաղ հայոց լեզվին (Ե. Չարենցի «Ես իմ անուշ...»-ի բանաստեղծության շերտերն ըստ Վ. Թեքեյանի «Տաղ հայերեն լեզուին» քերթվածի).- «Եղիշե Չարենցի: Չայրց բանաստեղծության մայրաքաղաքը», 1996, էջ 107-115:

Ահա եւ վերջին մի փաստարկ. 1935-ի խոր աշնանը Երեւանի պետական համալսարանի դահլիճում մասնակցում է հայ պոեզիային նվիրված ցերեկույթի: Դահլիճում էին նաեւ Մահարին, Խորեն Ռադիոն, Երտասարդ Ծիրազը, Չրաչյա Ներսիսյանը, Արուս Ոսկանյանը: Վերջինս «Ես իմ անուշ...»-ի արտասանությունից հետո Չարենցն ասում է. «...ուրիշները, այդ թվում՝ նաեւ դու, Արուս ջան, «Ես իմ անուշ...»-ի որոշ բառեր «խմբագրության» եք ենթարկում»: «Բար»-ի օգտին սխալը հիմնավորող բացատրությունը լսելուց հետո վճռակաճորեն հայտարարում է. «Ինձացած եղեք, որ ես գրել եմ բառ, միայն բառ եւ բառից բացի ուրիշ ոչինչ» («Չարենցիի հետ: Գուշեր», 2008, էջ 69):

Տաղի «Լուսապակ ճակատ» արտահայտությունը հանդիպում է Չարենցի վեպում՝ «Թերես լուսապակ ճակատով սուրբին, Մեծն Ներսեսի շինած եկեղեցին»-ում մեկն է: Նույն վեպում հանդիպում է «Ասպետություն»-ի «Շարժումով մի պարե» արտահայտությունը՝ «պարի շարժումներով մոտեցավ» (Չարենցի, «Սախտակ ձիավորք», Երեւան, 2016, էջ 137, 185): «Պարե արժույթ» «Պարի արժույթ» իհարկե տարբեր են, բայց անդարադարձը նկատելի է: «Մորս համար զագելը» նմանակող բանաստեղծության արդեն իսկ նշված ազդեցության հետ մեկտեղ այս օրինակները եւս վկայում են, որ Չարենցի լեզվապատկերային ազդեցությունը:

**1920** - Տարբեր տարիների ձեռք է բերում հայագիտական հրատարակություններ՝ Գ. Ջարբահանյան «Չայկական հին դարրության պատմություն. Դ. ԺԳ. դարեր» (Վենետիկ, 1987), «Եմինյան ազգագրական ժողովածու» (հատորներ, Մոսկվա-Վաղարշապատ, 1901-1913): Նրա անձնական գրադարանում իրենց հաստատուն տեղն ունեն նաեւ Շնորհալու, Լամբրոնացու առանձին հրատարակություններ, միջնադարյան տաղերի ժողովածուներ:

Դավիթ ԳԱՄՊԱՐՅԱՆ  
բանասիրական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր






Մեր փոստից

Աշխատանքի ծարավը

Ռազմիկ Աբրահամյանը շուրջ 10 տարի է բնակվում է Երեւանի հ. 1 տուն-ինտերնատում: Լինելով երկարամյա բնակիչ, նա ջանք չի խնայում խնամախոսների օրը ուրախ ու նպատակասլաց անցկացնելու համար: Որպես Լավ մարդ՝ ազնիվ ու բարի, որպես ընկեր՝ հավատարիմ, նա չի զլանում սահմանափակ շարժումներ ունեցող խնամախոսներին իր օգնության ձեռքը մեկնել: Ոմանց համար խնամքից մեկտեղ է այլ պարագաներ է գնում, շատերի համար լավ խորհրդատու է, գրուցակից ընկեր, փորձում է ընկերների կյանքը դարձնել ուրախ ու հետաքրքիր... այդպիսի ընկերներից են՝ Ռազմիկը, Ժորան, Հայկարանը, Տիգրանը եւ շատ ուրիշներ, որոնք գոհունակությամբ են արտահայտվում երկար տարիներ ունուցիչ եւ դասախոս աշխատած Ռազմիկի նկատմամբ:



Նր, սկզբում Գյումրիում, ապա Երեւանում: Գերագանց ավարտելով նույն բուհի ասպիրանտուրան՝ հրավիրվեց Վ. Բրյուսովի

անվան լեզվաբանական համալսարան՝ որպես ավագ դասախոս, զուգահեռ աշխատեց մի շարք միջնակարգ եւ բարձրագույն ուսումնական հաստատություններում: Նրա սաներից շատերը դարձել են լեզվի եւ գրականության ունուցիչներ:

Նա այսօր էլ զբաղվում է հասարակական գործունեությամբ: Մամուլում հանդես է գալիս բազմաբնույթ հոդվածներով, բազմիցս մասնակցել է հանրապետական եւ միջազգային մանկավարժական ընթերցումների: Ռազմիկ Աբրահամյանը՝ «ժողովրդության գերագանցիկ» է. ավագ մեթոդիստ, արժանացել է ստեղծագործ եւ հետազոտող ունուցիչ կոչման:

Կյանքի 80-րդ զարուն է բուրբել մեր լավ ընկերը, եւ շարունակվում է շջապատված մնալ հոգատարությամբ եւ ջերմ սիրով: Նա շարունակվում է ապրել ակտիվ կյանքով եւ իր լավատեսությունն ու փորձը փոխանցել մյուս խնամախոսներին:

Երեւանի հ. 1 տուն-ինտերնատ

Բանք մեծաց

Հաղթանակեց՝ հանուն ժողովրդի

Ութ տարի առաջ էր՝ աշխարհի կրկնակի չեմպիոն Տիգրան Պետրոսյանի ծննդյան 85-ամյա հոբելյանի կապկցությամբ՝ ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, շախմատի երդվյալ երկրպագու Սոս Սարգսյանին խնդրեց իր խոսքն ասել: Մեծ հայրենասերի մտորումները, կարծում են, այսօր էլ կհետաքրքրեն «Կրթության» ընթերցողներին:

«Նշանավոր արվեստագետ, գիտնական, վաճառական լինի կամ մարզիկ, ամեն ոք, ի վերջո, արժեք ունի նրանով, թե հարազատ ժողովրդի անունից ինչ է դնում համամարդկային քաղաքակրթության գանձարանը:

Ամաչելու բան չունենք՝ մերոնց բաժինը զգալի է: Էլ ավելի մեծ էր լինելու ներդրումը, եթե չտրորվեր ազգը 15-ին, եթե չլիներ ստալինյան-բերիական մղծավանջային խեղդոցը: Կոկորդոթ բռնված ինչպե՞ս երգես... Լռեցրին, երկար ժամանակով... Աշխարհն սկսել էր մեզ մոռանալ, մոռացնել էին տալիս...

Բայց մենք, հին սովորույթով, դժվար պահին ենք ծնուն, ծայրահեղ ժամին... Անսպասելի տեղից...

Հայտնվեց, շոնրալից պատռեց լուռությունը, Տիգրանն ու մենք շնչեցինք, հպարտացանք, մեր աչքերի պղտորը մաքրվեց, մեր աչքերը փայլատակեցին...


Երբ սաուն են՝ Տիգրան Պետրոսյան, պատկերացնում են այն փխրուն, նուրբ ցողունը, որ անբացատրելի ուժով ճեղքում է ասֆալտի հաստ շերտը, դուրս գալիս լույս աշխարհ...

Փորձիչատե ծանոթ են Տիգրանի կենսագրությանը, Հենրիկ Մայրանի դպրոցական ընկերն է եղել, շատ է պատմել, շատ ենք զրուցել, ընթերցանել ենք խոսել մեր կուռքի մասին: Նրա հզորանալու, ինքնահաստատվելու, բայց եւ նրա որբության, սովածության, նրա անտունության մասին...

Բարենպաստ ոչ մեկ պայման, բացարձակապես: Ամեն ինչ դեմ էր նրան եւ առաջին հերթին երեւի ազգանվան վերջավորության «յանը»: Իսկական արվեստագետ էր իր գործում, էությանը փառասեր չէր, կարող էր մնալ աշխատի պատմության մեջ՝ որպես նշանավոր, ակամավոր, ինչպես, ասենք, մեծատաղանդ Կերեսը: Հնարավոր էր՝ երբեք չբարձրանար Օլիմպոսի գագաթը, եթե մի օր չզգար, չտեսներ, չըմբռներ, որ հայրենիքն ու աշխարհով մեկ սիրված հայրենակիցները սեւեռում հայացքով, սրտի թրթիռով հետեւում են իր ընթացքին...

Տիգրանը դարձավ մարտիկ: Ինչպե՞ս կարողացավ իր մեջ այդքան ուժ գտնել, ինչպե՞ս կարողացավ իր կամքը դարձնել երկաթյա ու նետել պայթյալի մեջ...

Նա նվաճեց աշխարհի չեմպիոնի թագը՝



հանուն անիրավված իր ժողովրդի: Հանձարեղացավ՝ նրա արժանապատվության համար: Շախմատային արվեստի գանձարանը դրեց գլուխգործոց մոտիցներ...

Տիգրանը հայրենիք ուներ: Կարոտ ուներ: Հայրենիքը շտապում էր գուրգուրել, սիրել, փայփայել...

Մեր որդին էր, մեր հարազատը ու մենք շնորհակալ ենք՝ նրա սիրանքի համար, մենք հայրաբար հպարտ ու գոհ ենք, որ այն տարիների մեր գործ ու տխուր գոյությունը վերածեց բազում տոմերի, գեղեցկացրեց մեր կյանքը...

Հայոց ջահելները պետք է իմանան Տիգրան Պետրոսյանի կյանքի ու հաղթանակների մանրամասները...»:

Գագիկ ՀԱԿՈՒՅԱՆ

ԽՍՀՄ սպորտի եւ Ֆիզիկական կրթության, մեր շախմատային մեկնաբան

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի «Չկալովկա բնակավայրի մանկապարտեզ» ՀՊԱԿ-ի դաստիարակի թափուր տեղի համար: Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույց անցկացնում առանձին:

- Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (Չե 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (անկախության դեպքում),
- ինքնակենսագրություն (Չե 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունեցող դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ դեկտեմբերի 21-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 17:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից: Մրցույթը տեղի կունենա դեկտեմբերի 28-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի Չկալովկա բնակավայրի մանկապարտեզում, հասցեն՝ Գ. Չկալովկա, փ. 1, 7/1: Տեղեկությունների համար զանգահարել՝ (077) 73-97-38 հեռախոսահամարով:

«Կրթություն» թիվ 46-ի խաչբառի պատասխանները
Ուղղահայաց
1. Ջիմա, 2. Լիզա, 3. Գունո, 4. Ենոտ, 6. Ալլան, 7. Ադենի, 8. Արշիլ, 10. Ինդերտ, 11. Լանա, 12. Լոնդոն, 14. Անգարա, 15. Բասի, 19. Եդն, 20. Անգար, 21. «Պեպո»: 25. Կանազ, 26. Հրայր, 27. Տալ, 28. Ղազ, 29. Էրի, 30. Օկա, 31. Ինի, 32. Ազի, 33. Ասք, 34. Կլու, 39. Նեղոս, 41. Երուխան, 42. Ուրալ, 43. Էմին, 44. Շագրեն, 47. Գաուս, 49. «Անուշ», 50. Վերին, 53. Մայրի, 55. Վեբեր, 56. Հայնե, 59. Ուրան, 60. «Արդա», 61. Ֆրիկ, 62. Ալեն:
Հորիզոնական
5. Իգիդա, 7. Ասուան, 8. Ալան, 9. Ոզնի, 13. Գառնի, 16. Պիզա, 17. Անրի, 18. Սոնթե, 21. Պեգաս, 22. Դանթե, 23. Սուսե, 24. Պարս, 27. Տաղ, 30. Օրի, 33. Արկ, 35. Սանատրուկս, 36. Նագասակի, 37. Լազ, 38. Անի, 40. Զյու, 45. Արոր, 46. Մռավ, 48. Ազովի, 51. Անխել, 52. Ներոն, 54. Բեզու, 57. Ուրազ, 58. Կեսար, 63. Նվեր, 64. Լարի, 65. Անդեր, 66. Եդիչե:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ ԿԳՄՍՆ «Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի «Փոխադրումների կազմակերպում եւ կառավարում տրանսպորտում» (464 ժամ), «Քաղաքացիական պաշտպանության եւ արտակարգ իրավիճակների հիմնահարցեր» (288 ժամ), մոդուլների (դասընթացի բնույթին համապատասխան միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորմանը) դասախոսի թափուր տեղի համար:

- Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝
- դիմում (Չե 1),
- կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճենը),
- անձնագիր (բնօրինակը եւ պատճենը),
- աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Չե 4),
- մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
- այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,

- Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճենը),

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ դեկտեմբերի 9-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 17:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա դեկտեմբերի 14-ին՝ ժամը 16:00-ին, «Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում, հասցեն՝ ՀՀ Արարատի մարզ, ք. Արտաշատ, Աբարբեկյան 156:

Տեղեկությունների համար զանգահարել (0235) 2-40-81, (093) 01-37-80 հեռախոսահամարներով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ «Վարդենիսի «Բարեխան» պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնարանի «Վարի արտադրության տեխնոլոգիա» մասնագիտական խմբի վարպետի (1 դրույթ) ընդհանուր մասնագիտական եւ հատուկ մասնագիտական առարկաների (մոդուլ) դասավանդողի թափուր տեղի համար: Մրցույթն անցկացվում է բանավոր հարցազրույցի միջոցով:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

- 1. Դիմում,
2. Կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճենը),
3. Անձնագիր (բնօրինակը եւ պատճենը)
4. Աշխատանքի ստաժի վերաբերյալ տեղեկանք (Առկայության դեպքում),
5. Ինքնակենսագրություն,
6. Մեկ լուսանկար 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ ՀՀ համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճենը):
9. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ 2022 թ. դեկտեմբերի 14-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022թ. դեկտեմբերի 16-ին, ժամը՝ 14:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի ք. Վարդենիսի «Բարեխան» պետական քոլեջում, հասցեն՝ ք. Վարդենիս, Վ. Համբարձումյան 5:

Տեղեկությունների համար զանգահարել (094) 87-58-02 հեռախոսահամարով:

Հայտարարություն

«Դիլիջանի արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի լիազոր մարմինը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պայմանագրի պայմաններն են՝

- 1) ՀՀ քաղաքացիությունը,
2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):
2. Մրցույթն անցկացվելու համար հավակնորդը ներկայացնում է՝
1) դիմում կառավարման խորհրդի նախագահի անունով,
2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը,
3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը,
4) տվյալ հաստատության 5 տարվա զարգացման ծրագիրը թրթային եւ էլեկտրոնային տարբերակներով տույն կարգի 26-րդ կետի պահանջներին համապատասխան,
5) ինքնակենսագրություն:
6) Հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը:

Փաստաթղթերի պատճենները խորհրդի նախագահին կամ քարտուղարին առձեռն ներկայացնելու դեպքում պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են 2022 թ. նոյեմբերի 30-ից մինչեւ դեկտեմբերի 20-ը ներառյալ, ամեն օր, ժամը՝ 9:00-ից մինչեւ ժամը 18:00, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) եւ օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական եւ հիշատակի օրերից՝ «Դիլիջանի արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում:

Մրցույթը տեղի կունենա 2022 թ. դեկտեմբերի 28-ին, ժամը՝ 13:00-ին, Դիլիջանի արվեստի պետական քոլեջում, հասցեն՝ ՀՀ Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Կալինինի փ. 57:

Տեղեկությունների համար զանգահարել (0268) 2-74-86, հեռախոսահամարով: էլեկտրոնային հասցեն՝ pianoart@list.ru:



Փորձիր լրացնել

Ուշագրավ մաթեմատիկա

Ուղղահայաց

1. Հունգարացի մաթեմատիկոս, «Երկարաչափությունը անկանոն գծագրերի վրա ճիշտ դատելու արվեստ է» խոսքերի հեղինակ ... Փոյա: 2. Ֆրանսիացի մաթեմատիկոս: Նա ծնակերպել է քառակուսային հավասարությունների մասին թեորեմը, որ կոչվում է ... թեորեմ: 4. Իտալացի մաթեմատիկոս (1858-1932 թթ.) Ջուզեպե ...: 5. Հայ մաթեմատիկոս (1931-2020 թթ.): Նա առավելագույն հայտնի է խմբերի տեսություններում իր աշխատանքներով: 6. Սովետական մաթեմատիկոս-մանկավարժ, «Քառանիշ մաթեմատիկական աղյուսակներ» ձեռնարկի հեղինակ: 7. Հույն անտիկ մաթեմատիկոս (մ.թ.ա. 586-մ.թ.ա. 569), հայտնի է իր անունով կոչվող թեորեմով: 8. Անգլացի ֆիզիկոս, մաթեմատիկոս, «բնական փիլիսոփայության մաթեմատիկական սկզբունքները» աշխատության հեղինակը: 9. Հույն փիլիսոփա եւ մաթեմատիկոս (412-485 թթ.), նեոպլատոնականության ներկայացուցիչ, անտիկ փիլյան վերջին խոշոր դեմքը: 11. Անգլիացի մաթեմատիկոս, ով համարվում է կոմպլեքս թվերից n-աստիճանի արմատ հանելու եւ կոմպլեքս թվերը n-աստիճան բարձրացնելու բանաձեւի հեղինակը: 19. Քառանկյան տեսակ: 21. Փակ կոր հարթության մեջ, որի բոլոր կետերը գտնվում են նույն հարթության մեջ գտնվող կետերից հավասար հեռավորության վրա: 30. Հին հույն մաթեմատիկոս (մ.թ.ա. 325-մ.թ.ա. 270), Ալեքսանդրյան դպրոցի առաջին մաթեմատիկոս եվկլիդեսի գլխավոր աշխատությունը: 36. 20-րդ դարի առաջատար հայագի մաթեմատիկոս, ով էմմի Նոթերի հետ միասին համարվում է ժամանակակից արտարակտ հանրահաշվի հիմնադիր, էմիլ ... (1898-1962 թթ.): 37. Աթոռամերիկացի մաթեմատիկոս ... Վոն (1910-2008 թթ.): 38. Միլենույն կետից ելնող երկու ճառագայթներով կազմված պատկեր: 40. Գերմանացի ֆիզիկոս, քվանտային ֆիզիկայի հիմնադիրը Մաքս ...: 44. Հույն ճարտարագետ, մաթեմատիկոս: Եռանկյան մակերեսը ըստ երեք կողմերի հաշվելու բանաձեւի հեղինակը, որը կրում է «...ի բանաձեւ» անունը: 45. Շրջանագծով սահմանափակված հարթության մասը: 49. Երկրաչափական (պտտական) մարմին: 50. Չինացի փիլիսոփա, գիտնական (78-139 թթ.), ում անունով Լուսնի վրա կա խառնարան Չան ...:

Հորիզոնական

3. Գերմանացի մաթեմատիկոս, ով 1808 թվականին մաթեմատիկայի մեջ մտցրեց ֆակտորիալին (... նշանը): 5. Ֆրանսիացի ֆիզիկոս եւ մաթեմատիկոս, ով համարվում է էլեկտրադինամիկայի հիմնադիրներից. Անդրե ...: 10. Լատինական այբուբեն տառ: 12. 18-րդ դարի հայ երկրաչափ, ով աշխատել է Վենետիկի Միսիոնարյան միաբանության դպրոցում Սահակ ...: 13. Թվաբանական գործողություն: 14. Ֆրանսիացի մաթեմատիկոս, մեխանիկ: Նա ապացուցել է պարզ թվերի բաշխման ասիմպտոտիկական օրենքը, ... Ադամար: 15. Հույն մաթեմատիկոս (3-րդ դար): Նրա մասին տեղեկատվությունը վերցված է նրա գերեզմանաքարի վրայի արձանագրությունից: 16. Կատարյալ թիվ: 17. Շրջանագծի երկու կետերը միացնող հատվածը: 18. Ոչ ուղիղ գիծ: 20. Գերմանացի մաթեմատիկոս (1845-1918 թթ.), ով ստեղծել է բազմությունների տեսությունը, ... Կանտոր: 22. Հին հույն փիլիսոփա, Միլեթյան դպրոցի առաջին մաթեմատիկոսը, հունական 7 իմաստուններից (մ.թ.ա. 625-մ.թ.ա.548): 23. Մաթեմատիկական նշան ... (թվաբանական ...): 24. Բրիտանական մաթեմատիկոս եւ աստղագետ Ջոն Կուչ ... (1819-1892 թթ.): Նա երկար տարիներ զբաղվել է դիֆերենցիալ հավասարությունների տեսությամբ: 25. Ֆրանսիացի փաստաբան եւ մաթեմատիկոս, ով համարվում է անալիտիկ երկրաչափության հիմնադիրներից, Պիեռ ...: 26. Հրեա ականավոր մաթեմատիկոս, ով 40 տարի զբաղվել է խաղերի տեսության ուսումնասիրությամբ, Ռոբերտ ...: 27. Նորվեգացի մաթեմատիկոս, ով համարվում է հանրահաշվական ֆունկցիաների ընդհանուր տեսության հիմնադիրը ... Աբել: 28. Անգլիացի մաթեմատիկոս, ներմուծել է «պոտենցիալի» հասկացությունը, Ջորջ ...: 29. Անգլիացի ֆիզիկոս, տեսաբան, քվանտային մեխանիկայի հիմնադիրներից Պոլ ...: 31. Ռուսական ծագում ունեցող ամերիկացի մաթեմատիկոս եւ տնտեսագետ Իգոր ...: 32. Ֆրանսիացի մաթեմատիկոս էմիլ ... (1856-1941 թթ.), ում հիմնական աշխատանքները վերաբերվում են դիֆերենցիալ հավասարումների տեսությանը: 33. Ֆրանսիացի մաթեմատիկոս, ով ապրել է ընդամենը 21 տարի, բայց հասցրել է ստեղծել հանրահաշվական հավասարումների տեսությունը: 34. Ամերիկացի մաթեմատիկոս Նորբերտ ...: 35. Բրիտանացի մաթեմատիկոս, ով առաջինն է նախագծել ծրագրող մեխանիկական հաշվիչը «Վերլուծող մեքենան» Չարլզ ...: 36. Անգլիացի կին մաթեմատիկոս ... Լավլեյ: Նա առաջին անգամ կիրառության մեջ է մտցրել «ցիկլ»

Crossword grid with 52 numbered starting points for clues.

եւ «աշխատանքային բջիջ» տերմինները: 39. Հանճարեղ հույն մաթեմատիկոսներից Պապուս կամ ... Ալեքսանդրիացի (290-350 թթ.): 41. Անկյան տեսակ: 42. Եռանկյունաչափական ֆունկցիա: 43. Խորհրդային մաթեմատիկոս ... Շնիրելման, «Ցանկացած պարզ թիվ կարելի է ներկայացնել սահմանափակ քանակության պարզ թվերի գումարի տեսքով» գաղափարի հեղինակը: 46. Հռոմեացի փիլիսոփա (մ.թ.ա. 106-մ.թ.ա. 43): «Առանց կոտարակների մասին գիտելիքների իմացության, ոչ ոք չի կարող իրեն համարել թվաբանություն իմացող» խոսքերի հեղինակը: 47. Անգլիացի մաթեմատիկոս, ինֆորմատիկայի մասնագետ Ալան ...: 48. Անգլիացի մաթեմատիկոս Ջոն ..., «Մաթեմատիկայի գաղափարները» գիրքի հեղինակը: 51. Գերմանացի մաթեմատիկոս, ում հիմնական աշխատանքները վերաբերում են ոչ էվկլիդեսյան երկրաչափությանը. Ֆելիքս ...: 52. Չափման միավոր, այն կիրառվում է հիմնական կապի գծերում էլեկտրական ազդանշանների թուլացումը չափելիս:

Կազմեց՝ Վոլոդյա ՆԻԿՈՂՈՍՅԱՆԸ























# Բաժանորդագրվի՛ր, կարդա՛ «Կրթություն»

Օվկիանոսից այն կողմ՝ հեռավոր Ամերիկայում, օվկիանոսից այս կողմ՝ Եվրոպայում, հյուսիսում՝ Ռուսաստանում, հարավում՝ արաբական երկրներում, Ավստրալիայում, թե ամենուր, յուրաքանչյուր քաղաքացի ունի իր թերթը՝ մանավանդ, եթե այն մասնագիտական է եւ ուղղված է հենց իրեն... Հայաստանում, սիրելի՛ Ընթերցող, այդ թերթը քեզ համար «Կրթություն»-ն է՝ մեզանում պահպանված թերեւս միակ մասնագիտական թերթը, 1932 թվականից ի վեր («Կուլտուրական ֆրոնտ», «Սովետական դպրոց», «Դպրություն», «Դպրոց», 1997-ից՝ «Կրթություն» անվանումով):

Գիտե՞ս, սիրելի՛ Ընթերցող, շատ դժվար է լինել մասնագիտական պարբերական ու միաժամանակ մնալ հանրամատչելի, հետաքրքիր լինել եւ ուսուցչի, մանկավարժի, եւ նաեւ ուսանողի, ծնողի, բոլորի համար: Դա դեռ ոչինչ. արհեստավարժ եղար՝ այդ խնդիրը կլուծես: Բայց այսօր, եթե որեւէ կուսակցության, որեւէ քաղաքական կամ գործարար խմբի խոսափողը չես ու չունես այդպիսիք՝ իբրեւ հովանավոր, պիտի լուծես նաեւ տնտեսական խնդիր: Օրաթերթ չես, հրատապ լրատվություն չես՝ հրապարակելու, «դեղին» մամուլին հետեւելով՝ ընթերցողներ որսալու սկզբունքը խորթ է քեզ համար, որովհետեւ հայոց հազարամյա դպրության ու այսօրվա դպրոցի քարոզիչն ես, ու խոսքդ պիտի լինի լուսավոր, անքե՛ն, դրականը դրվատող ու հասարակություն կրթո՞ղ... ոչ թե նրան զավեշտով, հերյուրանքով գայթակղող:

Սիրելի՛ Ընթերցող, ինչ նախասիրություններ էլ որ ունենաս, համոզված եղիր, «Կրթությունը» անարա՛տ հոգեւոր սնունդ է տալու Քեզ, եւ ո՛չ միայն մանկավարժական թեմաներով: Իսկ եթե ուզում ես, որ մեր հանդիպումները լինեն շարունակական եւ գոյատեւի Քո՛ թերթը՝ մի օր լավ, մի օր գերազանց, մի օր էլ պակաս կամ թերի, բայց Քո՛ թերթը, որ ամեն չորեքշաբթի հայտնվում է Քո՛ ձեռքերում, եւ որի ճակատագիրը դարձյալ Քո՛ ձեռքերում է ուղղակիորեն, բաժանորդագրվի՛ր, կարդա՛... Սիրի՛ր Քո թերթը, որ այն օրավոր դառնա ավելի հետաքրքիր, փոխանցի՛ր այն Քո հարեւանին, բարեկամին, ընկերոջը, հորդորի՛ր, որ կարդա... Մեզ սնուցողը Դու ես՝ եւ բարոյապետ, եւ նյութապետ: Քո՛ բաժանորդագրությամբ, կրպակներից Քո՛ գնումներով, անհրաժեշտ տպաքանակ ապահովելով՝ Դու հնարավորություն կտաս, որ «Կրթությունը» գոյատեւի, դառնա փնտրված ու սիրված թերթ... Բաժանորդագրվի՛ր, գնի՛ր, կարդա՛ «Կրթություն», միշտ ունեցի՛ր Քո թերթը...

\*\*\*

«Կրթություն» կարելի է բաժանորդագրվել «Հայփոստի» եւ «Հայմամուլի» բոլոր տարածքային մասնաճյուղերում, բաժանորդագրություն կազմակերպող այլ գործակալություններում:

Մեկ տարվա բաժանորդագրության համար պետք է վճարել **10400** դրամ եւ ստանալ բոլոր **52** համարները:

Վեց ամսվա բաժանորդագրական գինը **5200** դրամ է (**26** համարի համար):

Երեք ամիսների բաժանորդագրության համար պետք է վճարել **2600** դրամ (համապատասխանաբար կստանաք **13** համար):

**Այլ մանրամասնությունների** համար կարող եք դիմել «Հայփոստի» (51-45-47), «Հայմամուլի» (45-82-00) եւ այլ գործակալությունների այն մասնաճյուղերին, որտեղ կատարում եք բաժանորդագրությունը:



Շաբաթաթերթ «Кртутун» (education) weekly «Кртутун» (образование) еженедельник 12.10.2005

## Մայրաքաղաք

Բիայնիլի-Վան, Երեւոնի-Երեւան... Քանի՞ դար կա այս անցումների միջեւ... Նախիջեւան-Երեւան-Իջեւան... Ե՛րբ է Նոյն անցել այս ուղերթով...



«Кртутун» еженедельник 05.10.2005թ. չորեքշաբթի թիվ 28 (175)



«Кртутун» еженедельник 18.08.2005թ. հինգշաբթի թիվ 21 (176)



ՀԻՄՆԱԳԻՐ՝  
ՀՀ ԿԳՄՍՆ  
«Կրթություն» թերթի  
խմբագրություն» ՓԲԸ

Գրանցման վկայական՝ 01Ս-049349,  
Տրված է՝ 11.01.2001թ.  
Դասիչ՝ 69312,  
Հասցեն՝ ՏԻԳՐԱՆ Մեծի 67,  
E-mail: krtutun@yandex.ru  
Հեռ. (043) 57 49 56, (043) 57 49 51

Խմբագրությունը ստացված թղթակցությունները եւ նամակները չի գրախոսում եւ ետ չի վերադարձնում: Չպատվիրված հոդվածների համար հոնորար չի վճարվում:  
Գովազդային նյութերի բովանդակության համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:  
Հղումը պարտադիր է:

Տպագրված է «ՏԻԳՐԱՆ Մեծ»  
հրատարակչության տպարանում:  
Տպաքանակը՝ 2000:  
Ծավալը՝ 4 տպագրական մամուլ:  
Ստորագրված է տպագրության՝  
29.11.2022թ.  
Գինը՝ 200 դրամ:

Համարի պատասխանատու՝  
Գլխավոր խմբագիր՝  
Գագիկ ՄԻՆԱՍՅԱՆ